## Ստորագրաստիտի :

|                |                   |               |
|----------------|-------------------|---------------|
| Չի գործեմնէ .  | իշէ մէյ զսէմ .    | ու գործեցէմ . |
| Չի գործեսնէ .  | իշէ մէյ զսէն .    | ու գործեցես . |
| Չի գործէնէ .   | իշէ մէյ զսէ .     | ու գործեցէ .  |
| Չի գործենքնէ . | իշէ մէյ զսէք .    | ու գործեցէք . |
| Չի գործէքնէ .  | իշէ մէյ զսէն իղ . | ու գործեցէք . |
| Չի գործեննէ .  | իշէ մէյ զսէլէր .  | ու գործեցեն . |

Եթէ 'ի գրաբառն և թէ յաշխարհաբառն , և եթէ 'ի տաճկականն՝ շեշտի ապառնին 'ի հրամայողական բանըս . որպէս ,

|              |                 |                |
|--------------|-----------------|----------------|
| Գործեսցես .  | (պիտի) գործես . | իշէ յէսին .    |
| Գործեսցէ .   | (լու) գործէ .   | իշէ սին .      |
| Գործեսցուք . | (պիտի) գործէք . | իշէ յէլիմ .    |
| Գործեսցիք .  | (պիտի) գործէք . | իշէ յէսին իղ . |
| Գործեսցեն .  | (լու) գործեն .  | իշէ սին լէր :  |

# Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

## Յաղագս Համաձայնութեան

առ Հասարակ :



**Մ**իաւորութիւն մասանց բանի ընդ միմեանս կոչի 'ի գրոց լեզու Համայնութիւն : Իւրաքանչիւր լեզու ունի իւր առանձին կանոնս՝ որովք յայլոց լեզուաց որոշի . և չէ ուղիղ Համաձայնութիւնն՝ եթէ ըստ կանոնաց իւրաքանչիւր լեզուի ոչ իցէ :

Իսոք կրկին օրինակաւ կապին ընդ միմեանս . մի անուն ընդ անուան , և երկրորդ՝ բայ ընդ անուան :

Ընուն ընդ անուան երրակի կապի :

Սախ իբր ածական ընդ իւրում Գոյականի, որպէս վերագոյն ասացաք :

Երկրորդ՝ սեռական ինչ հոլով կապի ընդ սյլում անուան , իբր յարկոյցոցն ընդ իւրում յարկոցելոյն :

Երրորդ՝ երկու նոյնահոլով գոյական անուանք կապակցին ընդ միմեանս , իբր Բոցոյոյութիւն ընդ իւրում Բոցոյոյութելոյն :

Յարկոյցոցն աօի սեռական անունն , որ ցուցանէ թէ ոյր է մերձաւոր անունն (կամ յատկացեալն) . որպէս , քունն 'ի ցուցանել թէ որոյ իցէ , գնեմ առ նմին սեռական ինչ հոլով սյսպէս , հօր ինոյ , որ յայտ առնէ՝ թէ քունն է հօր ինոյ : Ըստ սեռական հոլով որ ցուցանէ զիրն թէ որոյ է՝ աօի Յարկոյցոցն , և իրն Յարկոցելու :

Բոցոյոյութիւն աօի անունն՝ որ (որպէս բառն ինքնին ցուցանէ) , բացայայտէ զայլ գոյական ինչ անուն՝ թէ զինչ կամ ո՞ր իցէ , զոր օրինակ , եթէ միայն ասիցեմ քաղաք , ոչ բացայայտեմ թէ ո՞ր այն իցէ . բայց յաւելեալ Առաքանութեամբոյն , կամ Հոռով քաղաք , յայնժամ յայտնեմ թէ անուանեալն քաղաք՝ է Հոռով , ոչ

Վ ԵՆԵՏԻԿ ԿԱՄ Վ ԵՆՆԱ :

Լ՛նուն կապի ընդ բայի կամ իրր անուն Բայի . և կամ իրր Խնդիր :

Լ՛նուն Բայի որում Խնդիր Բայի ևս ասին , իմանի ուղղական հոլովն եղեալ առընթեր բայի . ամենայն բայք՝ կամ յայտնի , կամ զօրութեամբ ունին զայն , որպէս յառաջնում մասին առընթեր էական բայից յայտնի եղեալ կայ . սյսպէս , Լս էմ . Կո էմ . Դո է . և այլն : Իսկ առ այլ ընորդութիւնս լռելեայն իմանի , այսինքն պարտի լինել ըստ բնական կարգի , Լս գործէմ . Կո գործէս . Դո գործէ . և այլն :

Խնդիր կոչին ամենայն հոլովեալ բառք , զորս իւրաքանչիւր բայ ըստ նշանակութեանն պահանջէ ունել , զորմէ յերկար խօսեսցուք ՚ի գիրս յայս :

Խնդիր ձայնին և հոլովք անուանց որք են առաջի նախադրութեանց :

Պարզաբանին ասացեալքս օրինակաս :

Մտխառնեղծ մարդն Լ՛րամ ոչ պահեաց զպարտելբանս Լ՛սարտծոյ :

Պահեաց է ներգործական բայ , Լ՛րամ անուն բայի եղեալ յուղղական հոլով , և միանգամայն բացայայտիչ , մարդն է բացայայտեալ . նտխառնեղծն է անականն մարդոյ . զպարտելբանս խնդիր է հայցական հոլով ներգործական բայիս պահել , Լ՛սարտծոյ է յատկացուցիչ պարտելբանին :

Քերականութեան միակ կէտ նպատակի է քաջ իմանալ , և անսխալ շարագրել :

Լ՛ն քաջ իմացումն պիտոյ է բարւոք որոշել զմի մի ՚ի մասանց բանի՝ թէ անուն բայի իցէ արդեօք , թէ խնդիր : Լ՛ն դարձեալ խնդիրն ևս՝ ուղղական իցէ , թէ անորոշ հայցական . նախգրիւ տրական թէ ներգոյական :

Ղարձեալ առ անսխալ շարագրել՝ պիտոյ է քաջ հմտութիւն որոշելոյ , թէ յինչ հոլով եղեալ իցէ սյս բառ կամ այն՝ յուղղական թէ ՚ի հայցական , ՚ի նախգրիւ տրական թէ ՚ի ներգոյական . զոր օրինակ եթէ ասիցեմ , բողոքս զլուս , բողոքս շինեց , բողոքս մտա , բո-



զար ընկեցաւ : Ընաջին 'ի սոցանէ եղեալ է յուղղական  
հոլով : երկրորդն 'ի հայցական , երրորդն 'ի նախդրիւ  
տրական , և յետինն 'ի ներգոյական :

Եւ զի համբակք քերականութեան դիւրաւ կա-  
րացեն որոշել 'ի միմեանց զհոլովս և ուղիղ թարգմա-  
նել 'ի գրոց լեզու , պարտ է նոցա հարցուածով խելա-  
մուտ լինել բանին , օրինակ զայս ,

Իմ հայրս աս գիրքը գնեց խանութէն ստակով .

Պէնիմ փէտէրիմ փարայրւա պու քիթապը թիւ-  
քեանտան սաթըն ալտը :

Եսօրինակ լիցի հարցումն :

Ընաջին հարցումն :

Հ. Ո՞վ գնեց , Բիմ սաթըն ալտը ,

Պ. Իմ հայրս . պէնիմ փէտէրիմ :

Ո՞չ հարցումն ուղղական հոլով խնդրէ զպատխա-  
նի : Եպա իմ հայրս , պէնիմ փէտէրիմ յուղղական հո-  
լով թարգմանելի է :

Երկրորդ հարցումն :

Հ. Ի՞նչ բանը գնեց , Եէ շէյի սաթըն ալտը ,

Պ. աս գիրքը . պու քիթապը :

Ըն հարցումն Ի՞նչ բանը , նէ շէյի պատասխանին  
է հայցական : Եպա աս գիրքը , պու քիթապը պարս է  
թարգմանել 'ի հայցական հոլով :

Երրորդ հարցումն :

Հ. Ո՞ւսկից գնեց , Եէրէտէն սաթըն ալտը ,

Պ. խանութէն . թիւքեանտան :

Ո՞րտեղ , նէրէտէն հարցումն խնդրէ զպատասխանի  
'ի բացառական հոլով : Ուրեմն խանութէն , թիւքեան-  
տան թարգմանելի է 'ի բացառական հոլով :

Չորրորդ հարցումն :

Հ. Ի՞նչ բանով գնեց , Եէ իլէ սաթըն ալտը ,

Պ. ստակով : փարայրւա :

Հարցումն Ի՞նչ բանով , նէ իլէ կամի 'ի գործիական  
հոլով զպատասխանին : Ուրեմն «բանով» , փարայրւա 'ի  
գործիական հոլով թարգմանելի է :

Օպը հոլովոց խօսեսցուք 'ի կարգին :



## Գ Լ Ո Ւ Խ Ե Ը :

Յողագոս անուան թայի, իմ ուղղական հոլովոյ :

**Ո**րպէս յիշեցար 'ի վեր անդր, Ո՞վ, կամ Ի՞նչ, Վի՛մ, կամ 'Նէ՞ շէյ հարցումն է ուղղական : Եւ այս ուղղական հոլով ասի Լ'նուան թայի . զոր օրինակ, Հող'ն հնչէ . գէորգ գնան . տղէերք թղէեն . ծառք թողթողէն :

Եւ այս ուղղական հոլով պարտի համաձայնիլ ընդ բային թուով և դիմօք . որպէս և օրէնք են ամենայն լեզուաց : Ս' ասն այտորիկ չմարթի ասել Ե'ս գործէ . Գ'ո գործէմ . նա գործէս . և այլն . այլ ասելի է էս գործէմ . Գ'ո գործէս . նա գործէ : Ե'սն՝ յայտ առնէ զառաջին դէմն . Գ'ուն՝ զերկրորդն . նա՝ և ամենայն հասարակ աշունանք զերրորդ դէմն ցուցանեն . զոր օրինակ,

Հովիւք արածեն զխաշինս .

Հովէնէբբ խբածէն ոչխարնէբբ .

Չօպանլար գօյունլարը կիւտերը :

Հի . Ո՞վ կարածէ . Պի . հովիւները } անուն բայի է :

Հի . Վի՛մ կիւտեր . Պի . չօպանլար } անուն բայի է :

Հաթիք նշանացի խօսին :

Օնէալն բնութեամբ սիրեն զծնողս :

Թէպէտ և նախատի վար, սակայն ոչ ամաչէ :

Այր զրկի 'ի ճառագայթից արեգական :

Ս' խոյ հառապարիմ ոչ ստէ :

Պտուղ բազում խոնարհեցուցանէ զոստս ծառոց :

Շար պարուղը ծառին ճէղը վար կ'օղջանէ .

Չօգ մէյվէ աղածրն տալընը սարգըտրը :

Հի . Ի՞նչ բան վար կիջեցրնէ . Պի . շատ պտուղը } անուն

Հի . Նէ՞ շէյ սարգըտրը . Պի . չօգ մէյվէ } բայի է :

Նախանջ զաչս հոգւոյն կուրացուցանէ :

Երկէր ինքնին բերէ զպտուղն :

Երեգտին ընդ լուսոյ և զջերմութիւն տարածէ :

Ընդհանուր անդամք Տէր յարենէ սնանին :

Սնորհին Տէր ապականի , և 'ի հող դառնայ :

Եթէ տէր բային բազում եղական անուանք իցեն՝ բայն դնելի է սովորաբար յոգնական , զոր օրինակ յաշխարհիկ բարբառ ասեմք . Բաբլո ու սագլո իւրոն . Էլը , ըրին ու ուղար բեռ իւրեն . նոյնպէս և 'ի տաճկականն . Երբեք ձէ գալ իւրեւել . Էլի , գալը ձէ արիւն Երբ Բաշարուր : Սոյնպէս և 'ի գրաբառն ,

Սեղուն և մրջիւնն վատաց վարդապետք լինին .

Սեղանն ու մրջանը ծաւելուին ձարպէր իւրան .

Երբ վէ գարընծա թէմպէլէրէ ուստա օլուրլար :

Գինի և արբէլո-լիւն ապականեն զարս իմաստունս :

Պէտքոս և Յովնանն ընթանային 'ի գերեզման :

Թէ ըստ , թէ հոստ , թէ Երկիր , թէ օր զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան , անդադար մատուցանեն :

Հայր ի՞նչ և հայր ի՞նչ թողին զիս :

Գողն և գողնիցն 'ի միում պատժի են :

Եսացար սովորաբար զի երբեմն դնի և եղական , զոր օրինակ ,

Փայտ , խոտ և եղէգն վաղվաղակի ապականի 'ի հրոյ :

Փայտը , խոտը , ու եղէգը շոտի իւրեւն խաղախանի :

( )տուն , օթ , վէ գամը չափուճագ ակէշտէն թէլէֆ օլուր :

Հոստ և ցանկո-լիւն կերակրոց հանապաղ ընդունելով հանապաղ բորբոքի :

'Այ և արան իւր ապրեցաւ 'ի ջրհեղեղէ :

Յանձրեաբեր ամպոյ դաշտ և այգի պայծառացեալ ծաղկալից լինի :

Կրթութեան և հրահանգութեան կարօտանայ իմաստասէրն ճարտասունն և սերբողն :

Չիք ինչ 'ի մեղաց , զոր գինի և արբէլո-լիւն ոչ գործէ :

Եթէ բառ ինչ ըստ նշանակութեան իցէ յոգնական , բայն մարթի անխտիր դնիլ թէ եղական և յոգնական : Արպիսի են թուական անուանք որ ըստ նշա .

Նակութեան են բազմաւոր, զոր օրինակ մէնայն, ծաւ-  
 լաբոյ, գունդ, աղէ, և այլն :

Եղազակեաց մէնայն ծաւլաբոյն :

Եղազակեսցեն առ հասարակ մէնայն ծաւլաբոյն :

Եմէնայն օրոյն հարազատ բերէ յինքեան զնմանու-  
 թիւն հօրն :

Եմէն հարազատ զառի իր հօրն իննունն :

Հէր հօզ էվլատ քէնտի փէտէրինէ պէյնդէր :

Եյր իւրաքանչիւր նստէին յաթոռ իւրում :

Եմէն հարոյ իր առիւն ինն իննաբէր :

Հէր քէշ քէնտի իսկէմրիսինին իւզէրինտէ օթու-  
 բույորուտու :

Պատուեսցէ իւրաքանչիւր զընկեր իւր յաշխարհի աստ :

Ս ինն օր է, յորս արժան է գործել :

Չորս են կողմանք աշխարհի, արևելք, արևմուտք,  
 հիւսիս, հարաւ :

Եմէնայն մէնայն մէնայն մէնայն լեզուաց բաժանեցան  
 ընդ երկիր :

Ենեզական անուանք միօրինակ վարին ընդ եզակի  
 և ընդ յոգնակի բայի . որպէս,

Ենցցեն կեանք մեր իբրև զհետս ամազոյ :

Սէր իննայն զինն մնայնն մեզնէ զինն :

Պիլիմ համրիմիւզ պուլուտ իղի կիպի կէշէճէկ :

Սէրս զբանս քննեն, և ինն զկերակուրս ճաշակեն :

Եննին զմարդ հրեշտակ յարդարէ :

Եննին զգանութիւն սրտին ճամարտէ :

Սէրս միայն է շար :

Իւրս մարդկան հակառակասէր է :

Շ շափելիքն զազգի ազգի նիւթոցն զանազանութիւն  
 շափելիքն զգայ, և ընտրէ ՚ի միմեանց զխոշորա-  
 գոյնս և զոգորկան :

Չմէնայն մէնայն մէնայն մէնայն մէնայն ծաւլաբոյն լեզուայ,  
 մէնայն մէնայն (մէնայն) մէնայն մէնայն լեզուայ :

Եյր թիւրթիւպէթիւրթիւ շէյլէրին Ֆարկընը եօքշամա-  
 զընս առյար, վէ գապալարը վէ ինճէլէրի պիլիպի-  
 րինտէն այլըտ էտէր :

Եթէ 'ի միում բանի բազում դէմք պատահիցին ,  
բայն ընդ մերձաւոր դիմին համաձայնի , և առաջինն  
մերձաւոր է քան զերկրորդն , երկրորդն քան զերրորդն :  
Եւ յս կանոն է և յաշխարհիկ լեզուի , Եւ նա զոմն մէկն  
նէն համարալի ըլլանք . Գրուն ու թո ի զէայրդ մէկն էին  
ձէձ չէր ուրիշ : Պէն վէ սէն հէփիսինտէն զհատէ հա-  
մարաթ օլալում : Սէն վէ սէնին գարտաշն հիչ տայագ  
եէմէզսինիզ :

Եւ նայն ասորոսաժաշունչ գէրք և Տէր վկայեմք զմին  
քրիստոս աստուած և մարդ դաւանել :

Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո յանդիմանեալ զնա ,  
յորժամ որո և նա միայն իցէք :

Եւ ձեռին աստուծոյ եմք , և Տէր , և Բանք Տէր և մե-  
նայն հանձար , և գործոց ինչումսն :

Եւ նդէմ բայն , այսինքն աներևոյթն և անցեալ ըն-  
դունելութիւնն սովորաբար փոխանակ ուղղականի առ-  
նու զսեռական տէր բայի . մերթ ևս ուղղական , և սա-  
կաւ ուրեք տրական . որպէս ,

Հողմոյ առեալ զամպն այսր անդր տարաբերէ .

Հովիւ մոլը խառնոս ասորին անորին իւրոնի իւրեւրէ .

Իւրիւզկեար պուլուտու ալըպլ պիր թարաֆա օպիր  
թարաֆա կէօթիւրիւր :

Իւրի մալեալ զկակուղ կան ստեղծանէ անօթ :

Տեսեալ մարդիան զծիծառն , նովաւ ճանաչեն զհասա-  
նել գարնայնոյն :

Հեթանոսք ոմանք ուրացան զնախախնամել ասորոսայ  
գաշխարհ :

Օր 'ի ծագիլ արեգական լուսաւորի , և 'ի մտանել  
նորոս խաւարի .

Եւրեին իւրեւր ասորին օրը իւրոսասորի , ու անոր հարե-  
լու ասորին իւրեւրայ .

Արենեշին տօղտուղու վագրթ հալա այտընլանրր , վէ  
օնուն կիրտիլի վագրթ գարարրր :

'Ի մեռանիլ մարդոյ կորնչի գեղեցկութիւն երեսաց  
նորա :

Իոց պակասի 'ի պակասիլ փայտի :



Բայց սաի, 'ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել  
էրիւր անգործ յաշխարհիս հայոց :

Ըստն անյագ ուտելով, ծանրացեալ որովայնին փսխէ :

Սնորդի ոգի բանական ունելով, անմահ ստեղծան :

Անսաստել ուրիւս սատուծոյ չար է :

Եւ ոճ իմն, զի երրորդ դէմն յարակատար և  
գերակատար ժամանակացն՝ և անցեալ ստորագասակա-  
նի առնելով զտէր բայի 'ի սեռական հոլով՝ դնի փոխա-  
նակ երից դիմաց ևս . որպէս, գործեալ է ի՛. գործեալ  
է ր, գործեալ է նորո, փոխանակ ասելոյ գործեալ է՛  
էս, գործեալ էս րու, գործեալ է նա :

Գիտէ սատուած զինչ պիտոյ է մեզ, մինչև Տէր խընդ-  
րեալ իցէ 'ի նմանէ .

Սէր ինչրէ՛նն ասալ Աստուծոյ գիտէ, ի՛նչ մեզ ինչ  
պէտք է .

Հագ թաալէ պիզիմ տիլէմէմիզտէն իլէրի, պիզէ նէ  
քի իքտիզա իսէ՛ պիլիւր :

Սինչև էր արարեալ աստուծոյ, 'ի կանուխ գիտու-  
թեան իւրում տեսանէր զարարածս :

Սինչև է գործեալ հարգոյ բարի ինչ կամ չար,  
աստուծոյ յայտնի է անգործ մարդոյն :

Զիք ի՛ ամենեկին երդուեալ, և ոչ սուտ խօսեալ, և  
ոչ բարկացեալ ումէք, և կամ սաստեալ բանիւ  
լոկով :

Արպէս յայտ է 'ի վերոյեղեալ օրինակացդ՝ երրորդ  
դէմն յարակատարին և գերակատարին ինքնին որոշաբար  
ոչ ցուցանէ զդէմն, այլ մերձաւոր սեռական անունն :  
Սոյնպէս և դիմազուրկ բայք առանձին զդէմն ոչ որո-  
շեն, այլ տրական հոլովոյն է այս պաշտօն ցուցանել  
զդէմն . որպէս, լայել է ինչ, լայել է չեղ, լայել է  
նա . պարս է ինչ, պարս է չեղ, պարս է նա :

Պարտ է հանկանոց ունել բարբառ չափաւոր և հեզ,  
կերակուր և ըմպելի կարգաւորութեամբ :

Անհնար է հարգոյ առանց կերակրոյ կենդանի մնալ :

Սպիտ է երկրասարգոյ հնազանդ լինել ծերոց :



Բազում նեղութեամբ պարտ է Տեղ մտանել յար-  
քայութիւն երկնից :

Բայց բազում անգամ տրական հոլովն լռելեսյն և  
եթ իմանի . զոր օրինակ ,

Սիանգամ կամ երկիցս , և թէ առաւել ևս երիցս  
պարտ է (Տեղ) մեծարել զհիւրն վասն կերակրոց .

Սէկ էրին անգամ , ալ անէլն էրէ անգամ ղէպս է  
(մեզն) հրայցնէլ հէրը իւրոն ուրիշն համար .

Պիր իբի տեֆա , փէք փէք իւչ տեֆա միսաֆիրէ եէ-  
մէյ իչին իբրամ էթմէլն :

Երբեմն և բայն ևս առ ազգուութիւն տալոյ բանին  
զանց առնի :

Ըմենայն արարածք վասն մարդոյ , և մարդ վասն փա-  
ռաց աստուծոյ (էղն) :

Հակառակ նախանձու խոնարհութիւն , և ընդդէմ  
հակառակութեան լռութիւն (էրոս) :

## Գ Լ Ո Ի Խ Ի Ը :

Յողագս Յաբիպոցնէ իմ Սեռական հոլովոյ :

Յայս վայր խօսեցաք յաղագս հարցման ո՛վ կամ զէնչ ,  
որոյ պատասխանի՝ որպէս վերագոյն ասացաք զնի յուղ-  
ղական հոլով , որ և քէր Բայն ասի : Սնայ մեզ արդ  
ասել ինչ և զսեռական հոլովոյ , զորմէ բազում գիտե-  
լիք են :

Սեռական հոլովն Յաբիպոցնէլ ասի , որ ցուցանէ  
թէ այս ինչ կամ այն որոյ է . զոր օրինակ , գէրս ղէպ-  
րոսն , քոն զարթաղիւնն ինոյ , իրպալ հօրն ինոյ . ՚ի բանս  
յայտսիկ անուանք եղեալք ՚ի սեռական հոլով յայտ  
առնեն թէ գէրսն , քոնն և իրպալն որոյ իցեն :

Ընդհանուր հարցումն որոյ, կամ դյր, որոն, կամ ինչ  
 Բանին, ինչո՞ւ կամ նշանին պատասխանին է սեռական,  
 որպէս,

Ընդհանուր անգոսնէ զխրատ հօր.

Ընդհանուր հօրը իբրաբը Բանի արեղ լինելի.

Օպլում գրամը փէտէրինին էջիւտիւնիւ պիր շէյ եւ  
 րինէ գօմազ:

Նյ. Որոն խրատը, Պի. հօրը. } յատկացու-

Նյ. Բիմի՞ն էջիւտիւնիւ, Պի. փէտէրինին. } ցիչ է:

Յաշխարհիկ և տաճկական լեզուի յատկացուցիչն  
 միշտ նախադաս դնի յատկացելոյն: Բայց ՚ի գրոց լե-  
 զու սովորաբար յատկացուցիչն է յետադաս յատկա-  
 ցելոյն, թէպէտ յառաջադաս ևս լինել մարթ է:

(Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոյ, և անէծք  
 մօր խախտեն ՚ի հիմանէ:

Հօր օրհնութիւնն զաւի՞ն արունը ինչասպարի, հօր անէծ-  
 քը հիմն ինչասպարի:

Փէտէր թէսպիհաթը էվլատըն էվինի թէմէքքիւն է-  
 տէր, վէ վալիտէ նալէթի օնու թէմէլինտէն սեօ-  
 քէրէր:

Լօթն է թիւ տառայ շարաթուն:

Թեթեախորտիկ սեղան է մայր տառայութեան:

Յանկութիւն արծաթախորտի ոչ յագի ՚ի բազմութենէ  
 լինի:

Օանրութիւն պարոյ բեկանէ զոստս:

Յամարայնի ախորժելի է հովանի ծառայ:

Ոչ դք է, որ ոչ գովէ զգեղեցկութիւն արեգախորտի:

Վագաթն լեւոնի Բարձրի միշտ պատի ձեամբ և սառ-  
 նամանեօր:

Ընդ զճագումն լուսոյ ընդունելով, զգայ և ճանաչէ,  
 թէ զինչ է:

Ոչ խօսիլն է իմաստութիւն, այլ ճանաչելն զժամա-  
 նակ խօսելոյն:

Որպէս ասացաք յատկացուցիչն կարէ երբեմն նա-  
 խադատիլ յատկացելոյն: Բայց եթէ յատկացեալն նախ-

դիր ունիցի, նախդիրն դնի յառաջեղեալն, թէ յատկացուցիչ իցէ այն և թէ յատկացեալ:

Որպէս և տեսեր 'ի գոյական և յածական անուանս՝ զի էր նախդիրն 'ի նախադասն եղեալ <sup>1)</sup>:

Պարտական եմք օգնել միմեանց, և փրկել զիրեարս 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ վտանգից: Այսինքն, 'ի վտանգից հոգւոյ և մարմնոյ .

Պարտախնամ էմք մելիքին օգնել, ու մելիքի հոգւոյ ու մարմնոյ վտանգնէրէն ապարել .

Պիրիպիրիմիզէ եարտում էթմէյէ, վէ պիրիպիրիմիզի թէն վէ ճան գաղալարընտան գուրթարմայա պորճլույուզ:

Նթանոսք բաղդ և ճակատագիր ուսուցին, և զատուծոյ նախախնամութիւն, և վմարդկան անյնիշխանութիւն բարձին: Այսինքն, բարձին զնախախնամութիւն աստուծոյ, և զանձնիշխանութիւն մարդկան:

Քաղցն զարթուցանէ 'ի կերակրոցն ցանկութիւն:

Իերանն զսրտին իմաստս խօսիք 'ի յայտ բերէ:

Իազմաժամանակեայ սովորութիւն զնութեան զբութիւն առնու: Այսինքն, զգորութիւն բնութեան:

Օերիտասարգութեան հաստին ընծայեալ աստուածպաշտութեան, և գործոց բարեպաշտութեան:

Արբեմն յընտիր շարագրածս անկանի ընդ մէջ յատկացուցին և յատկացելոյն այլինչ մասն բանի, և յայնժամ նախդիրն մերթ դնի 'ի նախադասն, և մերթ 'ի վերայ երկոցուն ևս կրկնի <sup>2)</sup>:

<sup>1)</sup> Արբեմն վայելութար իսկ մանասանք 'ի հայցախնամ հուշն նախդիրն աս յեւրոպոս յարկացոցիչն մեայն քնի: Իսկ 'ի արտախնամ և 'ի բուցտախնամ հուշն յարկացոցիչն յաստուջ եղեալ, նախդիրն մեայն աս յեւրոպոս յարկացեալն քնի . զոր օրինակ,

'Ի վերին երեւս բարեխնամութիւն և գործ զլեշտմայ գործել: Որնախնակ ասելոյ, գործել զգործ լեշտմայ:

Ատարխն արայ զձնարեան նորա: Որնախնակ ասելոյ, արայ զատարխն ձնարեան նորա:

Հովանի առաքելոց զախտս, բժշկէր Վհիւանդաց,  
 Առաքելութիւն շուքն հիւանդները իւր ընտանիքը .  
 Հեղարիւնլարն քէօլկէսի հաստալարն մարազլարը  
 նը տիւղէլտիրիտի :

Օանիցես զբանիցն, որոց աշակերտեցար Վճճմարտու-  
 թիւն : Այսինքն, ծանիցես զճճմարտութիւն բանիցն՝  
 որոց աշակերտեցար :

Խորշակ զպտուղս խահրէ զծառոց :

Օթագաւորի ուրուք զփառս անկարանայ պատմել լե-  
 զու : Այսինքն, զփառս թագաւորի ուրուք :

Յաշխարհիս վայելեսցուք բարութիւնս : Այսինքն, վայել-  
 լեսցուք ՚ի բարութիւնս աշխարհիս :

Յանյուսութեան ընկղմիլ խորս : Այսինքն, (Նկղմիլ ՚ի  
 խորս անյուսութեան :

Բազում անգամ նախդիրն առ վայելութեան կրկ-  
 նի և առ յատկացուցիչն և առ յատկացեալն :

Սողոս զամենայն զքարկոծողաց Վհանգերծս ամիտփեալ  
 պահէր .

Սողոս ամեն շարիժողութիւնն լսելիքը ժողոված իւրա-  
 հէր .

Սողոս հէր թաշայանլարն ուրուպասընը թօփի էտիպ  
 սագլարըտը :

Տոպէփ մեկնեաց զփարաւոնի վերայն :

Օտունջեան և զգիշերոյ զանզուգութիւնս արեգակն  
 ծնանի :

Աստուծոյ յաւայ ելանել : Ասոց ՚ի պաշտելութեան :

2) Արեւին նախդիրն իրինի ՚ի վերայ բազմաց ևս . զոր օ-  
 բնիս :

Անեայն ծառ վերս արեւին, և զգոյնն, և զհամն բերել,  
 և զհեախան արեւոյ զձնեպեան զբոյնս : Փոխանտի  
 տաւրոյ, զհեախան բոյս արեւոյ ձնեպեան :

Օաշխարհ արծառն է գովել, զէրիլի զհեախանն ղնել-  
 լով, զձովըն զարարածառն, զօրոց զհոգիտանն, ար-  
 բեարաց զհեախանսրտութեան, զանիոց յարտութեան  
 և զբերս :



Արբեմն յատկացեալն դնի զօրութեամբ, և զնախ-  
դիր յատկացելոյն առնու յատկացուցին :

Ամենայն ծառատունկք ոչ երբէք փոխեն զգոյնս  
ծաղկանցն և զտերևոցն : Այսինքն, զգոյնս տերևոցն .

և ինչ ծառ մը չի փոխել իր ծաղկին ու արեւուն գոյնը :  
Ինչ պիր աղած քէնտի չի չէյինին վէ ետփրաղընըն  
բէնկինի տէյիչմէղ :

Բանք ձեր մի լիցին անհամ և անաղ իրբև զամ-  
կաց : Այսինքն, իրբև զբանս ուամկաց :

Աստուած տնօրինէ զմարմնաւոր պէտս մարդկան, որ-  
պէս և պայլ կենդանեաց : Այսինքն, որպէս և զպէտս  
այլ կենդանեաց :

Յիշեսցես զօր մահուն և զդատաստանին : Այսինքն,  
զօր դատաստանին :

Ասի այսպէս, Կալ զյայտերն իայտեր . և զաստուծոյն  
աստուծոյ :

Անուանք չափուց երբեմն փոխեն 'ի հոլով իւրեանց  
զանուեն, որ ըստ կարգի 'ի սեռական հոլով դնելի էր .  
զոր օրինակ,

Ան դու ինձ պարտա մի հաց . Բնխանալ հացի :

Ինձի պարտա մի հաց էլեր .

Պանա պիր փարչա էքմէք կէթիր :

Որ արբուսցէ ձեզ Բաթալ մի ջուր ցուրտ մայն՝ յա-  
նուն աշակերտի, ոչ կորուսցէ զվարձս իւր :

Բստ այսմ ասի ևս՝

Կաթիլ մի ջուր . Բէլ իտիլ ջուր . պիր տամլա սու :

Կկանակ մի հաց . Բէլ իտիլ հաց . պիր սօմոն էքմէք :

Ափ մի ջուր . Բէլ իտիլ ջուր . պիր ամուճ սու :

Տիկ մի գինի . Բէլ իտիլ գինի . պիր թուլում շարապ :

Աթէ զսոսա հոլովել կամք իցեն, երկօքին ևս 'ի  
միասին հոլովին :

Արքայութեան ժառանգաւորս կացուցանէ ընդ պա-  
տառոյ միոյ հացի, և ընդ բաժակի միոյ ջրոյ .

Պարտա մը հացի արեւ (կամ համար) ու գասալ մը  
ջուր արեւ տրտայուլեան ծառանգ իլնէ :

Պիր դատէհ սու, վէ պիր լօգմա էքմէյին եերինէ



Ճէննէթէ մերասխօր էտեր :

Հաստատեալ զսիրտ քո պարտաւոր թող հացիւ :

Եյս ոճ առ հասարակ վարի աշխարհօրէն և տաճկերէն, մանաւանդ 'ի տաճկականն բազում ուրեք յատկացուցիչն դնի յուղղական հօրով. սյսպէս, Եջօլէմ սուհաբը. պերպէր Լիւսիանը. Էլմա աղաճը. և այլն :

Իսկ 'ի լեզու գրոց սովորաբար դնին 'ի սեռական հօրով մերձաւոր անուանք չափուց. որպէս,

Կաթ մի ցօղոյ : Երկու բաժակ գինւոյ :

Նկանակ մի հացի : Իտր մի իւղոյ :

Ինոն մի փայտի : Վսան հաղար քոս ցորենոյ :

Եփ մի գարւոյ : Հարիւր մար ձիթոյ :

Սախա ուրէ՛ք յարկայնոցիչն փոխանալ պնելոյ 'ի սեռանիան հորով, համայնի լնդ իւրոս յարկայելոյն հորովով, և մանաւանդ 'ի Բացառանիան և 'ի գործէական հորովն :

Երկնք շրջագայութեամբ շորէ՛ք Էղանախօս իտարեւալ գործէ պարեմոս պատասարութեան : Փոխանալ ասելոյ, շրջագայութեամբ շորէ՛ց Էղանախօս :

Երբ նա գնի՛ն աստիկ յոյժ, որչա՛փ ոչ էր արբեալ յօրէ ծննդեանի իւրե՛ք : Փոխանալ ասելոյ, յօրէ ծննդեանի իւրոյ :

## Գ Լ Ո Ի Խ Գ :

Յազագոս արեւմտեան հողովոյ :

Յայտ իսկ է, թէ արականն կրկին է սյսինքն վերջա-  
հողով և նախորդի :

Ում կամ իմ իմիք, որոն, կամ ինչ քանին, իմէ,  
նէշէյէ, հարցումն խնդրէ զպատասխանի ի վերջահո-  
ղով արական :

Փոխ տայ Աստուծոյ, որ ողորմի անանկին .

Աստուծոյ զոն իստայ, ո՞վ որ իողորմի անանկին .

Վիմբի ֆուգարէէ մէրհամէթ էտէր, ալլահա էօ-  
տիւնճ վէրիր :

Ը. Որոն փոխ կուտայ, Պի. Աստուծոյ . } արական է :

Ը. Վիմբէ էօտիւնճ վէրիր, Պի. Ալլահա . } արական է :

Որ ամաչէ յայտնել զվէրս իւր Բժշիլի, ամենայն մար-  
մին նորա դառնայ յապականութիւն :

Մի ուժէ բարկանար, և մի զոք բարկացուցաներ :

Որդիք հնազանդ լերուք ծնողաց յէրոց :

Օկարիս ընկերին անխոնց համարեսցուք :

Օոր դու ատես, ուժէ մի առնիցես :

Սոյնօրինակ ասինան, խոստովանիլ չհամայնի, պար-  
մէլ էգօրն, հրամայել ծառային, հարուցանել արեւմտեան :

Սարմինս այս հանապազօրեայ կերակրոց պէտս ունի .

Աս խորմիւր ամեն օրվան իւրախորի հարխորու-  
նանի .

Շու վիճուտիմիզ հերկիւնլիւկ եէմէյէ իքտիզասը վար  
արը :

Ը. Ինչ բանի հարկաւորութիւն ունի . Պի. կերակուրի :

Ը. Աէ շէյէ իքտիզասը վար . Պի. եէմէյէ :

Թագաւորք հոգ տանին շինու-  
նանի աշխարհի :

Աղէքսանդր տիրեաց առ հասարակ ծովու և ցամաքի :

Ազոխ վնասակար է արամանց և ծուխ աչաց :

Արկիր զկերակուր, և օդ զտուրեւառութիւն շնչոյ շնոր-  
հեն իւրախոնց :

Շ ըլեանց յոց զգոյշ լինիջիր :

Սաստեցէք ձանխանց շտովորիլ 'ի խօսս աղտեղիս :

Ըստ բայք յաղլէ՛ն և լե՛ն փոխանակ հայցականի առնուն խնդիր 'ի տրական հօլով :

Սէր ախնայնի յաղթէ, ամենայնի համբերէ :

Լա է որ յաղթէ Բարիտ-Լե՛տն, քան որ առնու զքազաք ամուր :

Ղու ոչ լսես քո ազլիցն, և կամիս զի աստուած լսիցէ :

Լուր որդեակ իրապոս հօր քո :

Բայք որք ցուցանեն շարժումն տեղւոջէ 'ի տեղի, խնդրեն նախդրիւ տրական, և հարցանին ո՛ր, նէրէյէ :

Ըմենայն ուղիք 'ի ծով գնան, և ծով ոչ ընու :

Ըմէն ջուր ծովէ իմպէ, ո՛ւ ծովէ ընկցիլէր :

Հէր սէլ տէնիզէ ագար, վէ տէնիզ տօլմազ :

Հց. Ո՛ւր կըվազէ, Պի. ծովը } նախդրիւ տրական է :  
 Հց. Սէրէյէ, Պի. տէնիզէ. }

Սանկունք փորունք հանապազօր 'ի պարոցս երթան :

Ըմենայն 'ի հողոյ եղև, և ամենայն 'ի հող դառնայ :

Օփծեուն յառաջ քան զաշունն 'ի ջերմին տեղիս 'ի յերոցս երթայ :

Կյոր կուրի յորժամ՝ առաջնորդէ՝ սխալէ, և երկօքին 'ի իրիւրարս անկանին :

Որպէս մերկ եկաք յաշխարհս, նոյնպէս և մերկ ելցուք յաշխարհէ :

Տերեկոյի յորժամ 'ի մահէն ելանես, համարեա թէ 'ի գերեզման իջեր :

Ոստք ծառոց փափուկք դիւրաւ դառնան, յոր խղն և ձգեսցէ որ :

Ընձրև հրախառն տեղաց 'ի սոպոմ :

Ըյապէս ասի նաև, հարանէլ 'ի նաւ, 'ի քաղաք, 'ի քոն. արխանէլ 'ի հնոց, 'ի ծով. հանէլ 'ի ցամաք. հայիլ յերկնս. ելանէլ 'ի լեռան. փախիլ յանապար. և այլն :

Ըպարէն տեսեր՝ զի բայն որ նշանակէ շարժումն 'ի միոջէ յայլ տեղի, և հարցեալ լինի ո՛ր. նէրէյէ, առնու խնդիր նախդրիւս 'ի :

Բայց ուր բայն նշանակէ զշարժումն 'ի տեղւոջէ առ անձն, և լինի հարցեալ՝ առ ո՞ն, որո՞նն, ի՞նչ, առնու խնդիր նախդրիւ տրական, նախդրիւս առ :

Երթայք 'ի քաղաքն առ այս անուն,

Վարդաշէլ Ֆելան Վարդուն գոցէ՛ք :

Շէհրէ Փիլան ատամա կիտինիզ :

Իժիշկք յորժամ տեսանեն զոք հիւանդացեալ ոչ յապաղեն երթալ առ նա :

Ստին առ նոյ 'ի տապան անդր երկու երկու յամենայն կենդանեաց :

Յուզա իսկարիովտացի գնաց առ յահմայապէտան, զի մատնեսցէ զյիսուս :

Երթ 'ի տուն քո առ ընդամին յո :

Բստ այսմ ասի ևս, գնաց առ նա . որպտա առ Վայր իւր, շէհարժանի գալ առ իւր . և այլն :

Երբեմն դուն ուրեք և 'ի վերայ անանձն իրաց դնի նախդիր առ :

Վաւազան 'ի ձեռին ճանապարհորդի առ ամենայն ինչ օգտակար է :

Սինչև յերբ անկեալ դնիս ո՞վ վատ, երթ առ մեդուն, և ուսիր, զխարդ գործօնեայ է :

## Վ Լ Ո Ի Խ Վ :

Հայցական, Բացատրական, Վարձիական, Սերգոյական և Առջական հոլով :

Առ հարցումն՝ զո՞վ կամ զի՞նչ, զի՞նչ, կամ ի՞նչ բանը, Վի՞նչ, կամ նի՞շնէն պատասխանի է հայցական հոլով : Օհայցական հոլովս զայս կոչեն խնդիր սեռի, զի միայն ներգործական բայից է առնուլ խնդիր 'ի հայցական հոլով, և յայսմանէ սեռք բայից 'ի միմեանց որոշին :

Պարտիմք սիրել զմիմեանս .

Սէկւէի սիրելու պարտութիւն էնք .

Պիրիպիրիմիզի սէվմէյէ պօրճլույուզ :

Ն. Գ. Օճվ սիրել . Պի. մէկզմէկ } խնդիր սեռի է :  
Ն. Բ. Իմի սէվմէք . Պի. պիրիպիրիմիզի }

Որդի իմաստուն ուրախ առնէ վէտյը , որդի անմիտ  
արհամարհէ վէտյը է-ր :

Սի յանդիմաններ վէտյը՝ զի մի ատեսցեն վէ-վ . յան-  
դիմանեա վէմաստանն , և սիրեսցէ վէ-վ :

Սպան դաւիթ վճողէալն , և նախանձեալ ընդ այն  
սառուղայ ջանայր սպանանել վտա-իլն :

Սըջիւն յամարայնի պատրաստէ զկերակուր , և ընդ  
երկուս զհատն կտրէ , զի մի բուսանիցի .

Սըջիւնը ամառը իրպարտարէ իւրտիւրը , ու հապը  
էրիւն իւրիւրէ , որ չէճուանի .

Վարընձա եաղտան եէմէյինի հազըրլար , վէ (պույ-  
տայ) թանէսինի իբի պէօլէր , քի պիթմէսին :

Ն. Գ. Իճնչ բանը կըպատրաստէ . Պի. կերակուրը խնդիր սե-  
ն . Ն. Բ. Նէյի հազըր էտէր . Պի. եէմէյինի } ուրի է :

Ի ուսինն և պարք աստեղաց վէտյը գիշերն լուսաւորեն :

Օւրիւր շուրջ ջուր պատէ . և վէտ-ը և վէրիւր պա-  
տէ օղն :

Ոմանք 'ի կենդանեաց 'ի վեր բերելու վէտ-իւրն  
որոճան :

Խորատէ առաքեալն վաճանայն ինչ խորհրդեամբ խօսիլ :

Ըստուած ստեղծ պարտաձա ամենայն յունչէ :

Ըրբեալքն կորուսանեն վէտնտիան և վէտնտիան ընդ-  
բողո-իւնն :

Ինութիւնն զոգնալէ-ղոն իւրտիւրն զօրէ փոխարկել  
յարիւն :

Սի սիրեր զպարտութիւն-իւնն :

Բազում անգամ առ հայցականն ոչ զնի նախզիրն  
զ , յայնժամ կոչի անսրոչ հայցալիան :

Որթ խաղող բերէ : Ըյալինն , զխաղող :

Սնղու Տղը գործէ : Ըյալինն , զմեղը :

Սի խօսեսցուք Բանս օռնայնս : Ըյալինն , զբանս ունայնս :



Այս նախանձոտին արարումը ինչն ծնանին :

Օրբութիւն մահ ցաւագին առ դուրս պատրաստ ունի ,  
 ջերմութիւն արեգական ժողովէ 'ի ծովէ , 'ի գետոց :  
 և յաղբերաց մեզս անյրեւաբէրս :

Փայտ շատ յարուցանէ բոց մեծ :

Այսպէս ասի ևս՝ էրինս ոչ ունի . էրինս յետս  
 ունի . էրինս որս ունի . ունի՛ ինչն բազումս . գործ  
 գործէ . իերակո՛ւր գնի . արտն շինի . հոց ուրի : Այս  
 ոճ կարի յաճախեալ է , եթէ 'ի գրոց , թէ 'ի սամկա-  
 կան և թէ 'ի տաճկական լեզու . զոր օրինակ ասեմք և  
 աշխարհիկ լեզուաւ , արտն շինի , իերակո՛ւր գնի , հոց  
 ուրի , ջուր խմի : Այս պսամ և տաճկերէն էլ եւրո-  
 մագ , էիմէր էիմէր . սոսի իջմէր . և այլն :

Իայց յատուկ անուանք , որպէս և որք ընդ տաս-  
 ներորդ հոլովմամբն են , մասնական անուանք , և որք  
 ունին առնթեր 'ի ստացական և 'ի ցուցական գեր-  
 անուանց , և կամ զգլխորոշ յօդ , այսպիսիք ոչ ախոր-  
 ժեն գնիլ աննախդիր հայցական , վասն այնորիկ ոչ ասի  
 իս արեւի հայր է՛ , այր սնի , զեւրոս , նա , այլ ասել արժան  
 է , իս արեւի զհայր է՛ , զայր սնի , զեւրոս , զնա՝ ) :

Արդ առ 'ի գիտել , թէ արդեօք 'ի բանի միում  
 բառ ինչ ուղղական իցէ , թէ անորոշ հայցական , գիւ-  
 րահեշտ ճանապարհն այս է .

Իթէ անուն բայի է՝ հարկ է զի իցէ ուղղական :  
 Իսկ անուն բայի է այն բառ՝ զորմէ են բանքն , և հար-  
 ցանի ուղ , զինչ , ո՛վ , ինչ բան , ինչ , նե՞ շն : Իսկ եթէ

1) Արեւի սոսի յագնակի հայցականն և արարականն զորանան  
 ս գրոցս գնի . յայսպէս ,

Պարտուել զուրբ նշխարք ոսկերաց էրանի-լեացն գեղե-  
 ցիկ աւանդումը ունեւել է էլի-ղեցի : Փոխանակ  
 ստելոյ , զուրբ նշխարս :

Ս արարողիքս աւանդել զարտուելի են ժան զհարք ըստ  
 մարմնոյ : Փոխանակ ստելոյ , ժան զհարս :

Աստղաբարդ զարմած էրեցոս : Փոխանակ ստելոյ , սո-  
 սաղարս :

ոչ իցէ անուն բայի և հարցանեմք զո՞վ, զի՞նչ, զո՞վ, ի՞նչ  
 Բանը, ի՞նչ, նէ՞լէ՞ն, յայնժամ է խնդիր սեռի:

Եթէ բայն չէզոք կամ էական իցէ, մերձակայ անունն չմարթի լինել հայցական հոլով որպէս (էջ, 156.) սացաք:

Ա. հարցումն՝ ո՞ւտի, յի՞նչ իրաց, ո՞ւսի՞ց, ի՞նչ Բանն, ի՞նչ, նէ՞լէ՞ն, նէ՞լէ՞ն, նէ՞լէ՞ն, տուեալ լինի պատասխանի ՚ի բացառական հոլով:

Եմբարտաւանութիւն ՚ի յերկնից ընկէց զհրեշտակսն:

Եմբարտաւանութիւն էր ինչպէս զարձգեց հրեշտակները:

Յօտուլուգ մէլայրդարը կէջտէն տիւշիւրտիւ:

Ն. Մակից վար ձգեց. Պի. երկինքէն յբացառու:

Ն. Երէտէն տիւշիւրտիւ. Պի. կէջտէն ՚ի կան է:

Օտու խորարմատ ՚ի հոգնոց ոչ տապալի:

Օգեստուք պատասպարիմք ՚ի Կօլոյ և ՚ի ստանախանեաց:

Նրաժարեցուցանէ առաքեալն յանօգորտ և ՚ի շնաստիար զնաբանութիւնէ:

Պիւթագորոս կրօնս եղ ժուժկալել ՚ի գիւնոց:

՚ի Բժոնութիւն և ՚ի գիւնոցիութիւնէ արարածոց ըստ նմին համեմատութեան և արարչագործ նոցա երևի:

Սրբեսցուք զլեզուս մեր ՚ի Կարալի Բանից, ՚ի Բանաստանաց, և ՚ի սարխօսութիւնէ:

Թէպէտև նախդիր բացառական հոլովոյ է ՚ի որպէս յայտ է, սակայն սակաւ ուրեք մարթ է դնել և զնախդիր ու ՚ի:

Ենհնարինքն ու ՚ի մարդկանէ, հնարաւորք են յատուծոյ:

Սիթէ տկարանայցէ ու ՚ի յատուծոյ բան:

Ա. հարցումն՝ որո՞վ կամ ի՞նչ, ի՞նչ Բանով, նէ՞լէ՞ն, նէ՞լէ՞ն, պատասխանի է ՚ի գործիական հոլով:

Որք ծուլութեամբ անցուցին զկեանս, զղջացան, և արտասուօք և հառաչանօք պատմեցին ՚ի շահ զկնի եկելոցն:

Իրենց ինչպէս ծուլութեամբ անցուցանելու զղջացան,

ու լաւով ողբով պատմեցին Եփեսէն Էփրաներուան օգ-  
րին համար .

Քէնտի Էօմրիւնիւ թէմպելլիլէ կէշերէնլէր փիւշ-  
ման օլտուլար , վէ կէօզ եաշը յըլա արտտան կէլէն-  
լէրին ֆայտալարը իշին՝ նազլ էթտիլէր :

Հ. Ե. Ի՛նչ բանով անցուցին . Պի . ծուլութեամբ :

Հ. Ե. Նէյիլէ կէշերտիլէր . Պի . թէմպելլիլէ :

Ըստուած զերկիրս հաստատեաց , և շրթնք Էղննախօք  
տարւոյն պսակեաց : Ըսլև անասնօք և լուշնովք , գե-  
րօք և ողբիւրախմբք զարդարեաց : Ըս ծառօք և  
ծաղիօք և ողբի ողբի բոսօք զարդարեաց :

Երկինս այս յստի օգով , և արեգական շէրք լուսով  
պայծառանայ :

Արեգակն հրային հաստեք ջեռուցանէ զամենայն գոյա-  
ցեալս :

Ըստուած նախախնամօղ զօրոլեւամբ կառավարէ զա-  
մենայն :

Սիսիթարի և սիոսի անձն մեր շնով , և նորոգի  
յաշխատութենէ :

Սի յղփացուցաներ զմարմին քո բազում իերախոջ :  
Կրիայ ծածկեալ ունի զանդամս իւր նիւրախիւրդ պա-  
րիւնիւ :

Որդեակ՝ խորհրդով գործեալ զամենայն :

Ըստ այսմ՝ ասի ևս՝ ոչօք արեսանել . յեռօք գործել .  
արիւք գնալ . հարիւնել գառազանա . և այլն :

Բազմադիմի է նշանակութիւն ներգոյական հոլովոյ , է  
ուրեք զի նշանակէ ՚ի մեջ , է՝ զի ՚ի վերայ , և է՝ զի ուր :  
Հարցումն՝ ուր , ուր , նէրէրէ կամի պատասխանի  
ի ներգոյական հոլով :

Ի ճանապարհի ոչ է պարտ փութալ յառաջ քան  
զաւագագոյնն .

Ճամբան մեծէն առաջ պէտք չէ երթալ .

Եօլտա պէոյիւքտէն իլէրի էվէթլէմէմէլի :

Հ. Ե. Ուր . Պի . ճամբան . } ներգոյական է :  
Հ. Ե. Երէտէ . Պի . եօլտա . }

Ս ան այնորիկ 'ի քաղաքս բնակիմք, զի ընդ միմեանս  
զմիաբանութիւն ունիցիմք<sup>1</sup>:

Ղ ստանին լերինք բարձունք որպէս 'ի ցամառի նոյնպէս  
և 'ի ձմեռ:

Յ ովսէփ յարեմաթացին եղ զմարմին տեառն յիսուսի  
'ի գերեզմանի:

Յ ախնայն Կիւրէն աչք տեառն դիտեն զբարիս և զչարս:

Յ իսուս ննջէր 'ի խելս նաւին 'ի վերայ բարձի:

'Առնյալէս և հարցումն՝ ուր, յորոյ վերայ, ո՞ւր,  
ի՞նչ բանին վրայ. ներքեպէ, նե՞ շէյ իսորիւնքե պահանջէ  
պատասխանի 'ի ներգոյական հոլով:

Ը ազակն 'ի խաչին միով բանիւ արդարացաւ.

Ը սուրբ խաչին վրայ մէկ խօսքով արարեւ իշխան.

Ղ քրտրզ հաչքն իւզէրինտէ պիր սեօզ իլէ սալիհ օւ  
տու:

Ս արդ կուեալ ձեռօք յոբ, բնակէ 'ի տունս թա-  
գաւորաց:

'Ատաւ տապանն 'ի լերինս արարադայ:

Ը զեղն ձգի յամպս յաւուրս անձրեաց:

Օ պատկեր արքունի գրոշմեն 'ի դահլիւնի:

Ը ստ այսմ ասի. նորիւ յալեռան. գերեւ 'ի լեղէն.  
ի՞տլ 'ի դանին:

'Առնյալէս հարցումն՝ ուր, կամ յի՞նչ իրս, ո՞ւր,  
կամ ի՞նչ բանի մեջ. ներքեպէ, նե՞ իջնեպէ, պահանջէ  
պատասխանի 'ի ներգոյական հոլով<sup>1</sup>):

Ս րչափ որ 'ի կենցաղումս է, ոչ է երանելի յաղազս  
անյայտութեան ելից.

Ս րչափ որ մէկը աշխարհն է, (կամ աշխարհին մեջն է,  
երանելի չէ՝ ինչ բլբլբլ յայտնի չբլբլբլն համար:

'Աէ գատար քի պիրքիմսէ տիւնեատա (կամ տիւնեա

<sup>1</sup>) Երբեմն նախորդի ներգոյականին ներգործութեամբ ոչ  
բնի, հանաւանք որս սկսեալորի բնութիւն յ իցէ:

Ը պաշտարութիւն՝ զբնիցմալ հոգին յարապիս գոյնոց 'ի  
բարխանս հանէ: Ը յայնքն, 'ի յարապիս գոյնոց:



իջինատէ) տիր ազըպէթի պէլիբսիզ օլտուղոււնտան  
էօթիւրիւ մութլու օլամազ :

Ը. Ուր, կամ ինչ բանի մէջ, Պ. աշխարհքիս մէջ :

Ը. Արեւտէ, կամ նէ իջինատէ. Պ. տիւնեա իջինատէ :  
Օմիսն կամ խորովեն հրով, կամ եփեն 'ի կախայս :  
Ի ջուր հարստեաննի բոլորակութիւն արեգական :  
Տանասանս չիք քան զայծեամն տեսանող :

Հառութիւն յօգոս ոչ գտանին նշմարանք գնացից :

Ի կարօպուլեան է ամենայն վատ, զի ոչ յօժարին  
ձեռք նորա գործել ինչ :

Երծաթ և ոսկի փորձի 'ի Բնու :

Բնու այսմ ասի ևս՝ նարիւլ 'ի Կոն. ճէնէլ 'ի Կարիւլ-  
Գէ. Լէրէլ Գէրուսանս 'ի Կարասարանի :

Բազում անգամ ներդրականն զգործիականն ունի  
զօրութիւն :

Վատապարտեաց զմեզ աստուած 'ի քիրտն երեսաց  
ուտել զհաց : Այնինքն, քրտամբք երեսաց .

Աստուած Բնու Կարասարիւլի Երէնի յարինս զհաց  
ուրիւլ .

Հագ թանակէ պիզի գազէպլէտի աննրմրզըն թէրլիլէ  
էքմէյիմիզի եէմէյէ :

Արամ ոչ պատրեցաւ յօձին սուտ խոստումն : Այն-  
ինքն, սուտ խոստմամբ օձին :

Առաքեալքն 'ի գալ հոգւոյն սրբոյ խօսեին յայլ և  
այլ լեզուս : Այնինքն, այլ և այլ լեզուօք :

Ի յոյք և տունկք 'ի գոյնս զանազանս, 'ի համս և 'ի  
հոտս, փառս տան Աստուծոյ : Այնինքն, զանազան  
գունովք, համովք և հոտովք :

Սոյնպէս ասի ևս՝ ազապլէլ 'ի յայն Բնու, այսինքն,  
յայնիւ Բնու : Արիւլէլ 'ի խորին բան Լանիբուլեանն, այս-  
ինքն, Լանիբուլ և խորին բնու :

Սոչական հոլովն զուղղականն կոչելով իմն ցուցանէ :

Սրբէակի բաց 'ի տեսանէ յայլ ումբէ մի երկնչիցիս :

Օտարայ՝ հնազանդ լերուք տերանց ձերոց :



Եղբայր՝ մի ձանձրանայք զբարիս գործել :

Տէր՝ լուր աղօթից խնց :

Յնոսոս որդի՛ դաւթի՛՝ ողորմեաց ինձ :

Ո՛վ սիւնն սիւնն գեղեցիկս բարբառեցար ոչ երանել  
զբարեբախտութիւն մարդկան մինչև 'ի վախճան :

Յատուկ անուանց կոչականն սակաւ ուրեք փո-  
փոխի 'ի վերջն . սյսպէս , Պէրբէ , Պօղէ :

## Գ Լ Ո Ի Խ Ե .

Պատմական և պարտաւան հոլովք :

Են բայք ինչ՝ որոց խնդիրն հարցմամբ ոչ գայ 'ի  
յայտ , որպիսի է պատմականն և պարտականն՝ զորս  
յաճախ ընթերցանութեամբ է ուսանել , և 'ի սոցանէ  
զոմանս կարգեմք առ տեղեալս :

Պատասխանի հարցմանս՝ զուժմէ՞ , որոն ձեռայ , ինչ-  
որեքն էօթիւրէն , ինչն է-վէրէնէ է պատմական :

Համբերելովն ծանուցուք թէ զուր է չարախօսաց  
զըպարտելն զմէնջ .

Համբերելով իմացնէնք , որ չարախօսնէրուն Տէր ձեռայ  
զըպարտելը պարտոյ է :

Սապր էթմէյիլէ կէօստերէլիմ քի պիզտէն էօթիւրիւ  
զէմմ էտէնդէրին իֆտիրասը ասըլսըզ տրր :

Բերէին համբաւ չար զըլնէփայ եղբարքն նորա առ  
հայրն իւրեանց :

Օղջբօրն ամօթալի գործն փութաւ ծածկել , մեռո՛ 'ի  
քեզ զմեղսն , զոր լուար զնմանէ :

Սի սուտ վկայեր զընիւրէն թոմէ :

Ոչ որ 'ի նախնի հաւատացելոց ասեր զընչեց իւրոց ,  
թէ իւր իցէ :

Տեսիլ աշխարհի իւրով գեղեցիկ կարգաւորութեամբն  
զըպարտելն պատմէ :

Ոչ երբէք ննջեսցես ունելով ոխս զուժեքէ :

Պարտին զՌեւանց հոգալ անգամքն :

Եթէ դք անմտաց 'ի մտի ունիցի զերախտիս աստուծոյ գոհանայ զնմանէ :

Սի խորհեսզեք չար զուժեքէ :

Ըստ այսմ ասի ևս՝ որդիքէլ զաստուծոյ . չարս-  
խուէլ, կամ հայհոյել զուժեքէ : Կտիւէլ զխոյրէ . իւրա-  
զէւանի . և այլն :

Պարտական հոլովն նշանակէ անորոշ ժամանակ կամ շուրջ և շուրջանակի :

Յարեաւ սամիսոն զմէջ գիշերաւ , և թափեաց զգը-  
րունս քաղաքին գաղայ .

Սամիսոն իւս գիշերանց էլաւ , ու գաղայ խալէն որդի-  
քը զբոցոց .

Սամիսոն եարը կեճէլէյին գալգար , վէ գաղա շէ-  
հիրին գափուլարընը գօփարտը :

Օ ինն խոսան գոչեաց Յիսուս 'ի ձայն մեծ :

Ըստ այսմ ասի՝ զհասարակ գիշերաւ . զբոցոց որ  
հո գիշերոյն . զՌեւանուրէ , որ է ասել , որդի 'ի իւս գի-  
շերը . որդի 'ի սահալը շուրին . որդի 'ի իւս օր :

Յիջանել հրոյն զՏինգ քաղաքաւ (սողոմացւոց) փրը-  
կեաց աստուած զղովտ .

Երբոր իրակ ինչաւ սողոմացոց հինգ խալէն բոլորի-  
քը , ստուծ զովոր զբնից .

Ստոմլուլարըն պէշ շէհիրինին տէօրտ թարափընս  
աթէշ եաղտըղընտա , ալլահ զղվտու սագլատը :

Ելանէ արեգակն ընդ հարաւ , և պատի զէւանանիս :

Եւք անմտի զխոյրօք յածին :

Չայրն անկեալ զպարանոցաւ անառակ որդւոյն համ-  
բուրեաց :

Ըաղեղն վնասակար պատի զժոռոնիս :

Ըրկանել զէւրեաւ կամ զէւրե կամ զանյոմէ զբզ-  
գէսսն . նշանակէ զգէսսրը զլոն տանել կամ զլեւել կամ  
հոգնել :

Ի՛րիստոս էառ կտաւ մի , և արկաւ զէւրեաւ , և ըս-

կրտաւ լուանալ զոտս աշակերտայն :

Իստ սյամ ասի նաև՝ յորչ պօղիով արկանել :

Են բայք ոմանք՝ որք թէպէտև անորոշ ժամանակ  
ինչ կամ շուրջ և շուրջանակի ոչ նշանակեն, սակայն  
խնդիր պարառական ընդունին :

Օգուակ անարգ է, որ անցանէ զպատուիրանաւ ծնո-  
ղաց :

Գիշ զառաջի է, որնոր էր հօրը յօրը հրամանէն խնցնէ,  
կամ շէքանելը :

Ըթալարընն սէօզիւնիւ թուժմայան էվլատ, սյ-  
սուղ տուր :

Ըստպէս ասի նաև՝

Ընցանել զառաջի, ուխտը չիպահել :

Ընցանել զառաջի, օրերը անցընել : ծերանալ :

Որք զանց արարին զիմաստութեամբ, զանմտութեան  
թողին յիշատակ յաշխարհի :

Որոնք որ իմաստութեան հոգ չիտարին, աշխարհին մեջ  
իբեց անիւնընդուն յիշատակը լուրջն :

Իլիմէ հաճէթսիղ օլանէր, ահմագլըզարընն նը-  
շանլարընն տիւնեատա պրրագտըլար :

Սի պանցանօք մերովք զանց արասցուք :

Սի ծիծաղեսցիս պօղիով ընկերին :

Սոյնպէս ասի նաև՝ այդանել զքանիւք. արհամար-  
հել զինն : զանց ասանել զնովա :

### Օրանոցոհն :

Որպէս ՚ի վերոյ ասացաք, թէ պատասխանի ո՞վ  
հարցմանս է ուղղական, որ՝ և րէր Բայի ասի : Ոյր  
հարցման պատասխանին է սեռական, որ կոչի յառիւ-  
ցոցն : Իսկ հայցականն ասի ինքիք սէնի : Կոչականն  
՚ի բանս առանձին վարի : Իսկ մնացեալ հօրովքն սյս-  
ինքն նախգրիւ և վերջահօրով տրականն, բացառականն,  
պատմականն, գործիականն, պարառականն, ներգոյս-  
կանն ինքիք Բնութեան ասին բայիցն՝ յորոց վերայ ան-  
կանին :

## Գ Լ Ո Ի Խ Զ :

Բացայայտիչ և Բացայայտեալ :

Բացայայտին սովորաբար համաձայն դնի ընդ բացայայտելոյն հոլովով :

Ի մէջ բացայայտիչ և բացայայտեալ անուանց իմանի լռելեայն մեկնական բառ ինչ, այսինքն, այս է, որ է, կամ իմա, աւել, որք երբեմն դնին և ներգործութեամբ իսկ. զոր օրինակ,

Սի սիրեր զծուլութիւն և զքուն, (այսինքն) զմայրն ամենայն թշուառութեանց.

Օտուլութիւնը ու չոնը մի սէրէր, ամեն լշուառութիւններուն պատճառը.

Ներ սէֆիլիկ սեպէպի, թէմպէլլիսի վէ ույքույու սէվմէ :

Ես էրի ու պայուսութիւնս են, որ շարժեն զմարդն ՚ի վնասակարսն, (այսինքն) Կիսիլ աչաց և լուր ակտն ջայ :

Նուանդանայ մարմինն յառաւելուլ միոյ Կարէրն ջէրմայն ասեմ կամ ցրպոյն :

Սրտմտութեան քում մի բանար դու պարտն (այսինքն) պէրան չո :

Պաուղ երկպառակութեան է կոմն սատանայի (այսինքն) հիւան, Բամբասանքն, Կարէլութիւն :

Եմենայն սրբազանիցն բանք ՚ի սոյն զմեզ յորդորեն, (այսինքն) Եղբայրասէրս լինել :

Եմենայն մարմին ՚ի շրէյ Կարէրայ է խառնեալ, (այս է) ՚ի հողայ, ՚ի ջրայ, ՚ի յօրայ, և ՚ի հրայ :

Եթէ բացայայտեալն նախդիր ունիցի, նախդիրն դնի ՚ի նախադասն, եթէ բացայայտիչ իցէ այն և եթէ բացայայտեալ : Ե՛յլ երբեմն ՚ի հայցականն մարթ է զը-



նել զնախդիրն առ յետագասն միայն, որպէս (Էջ, 170.) վասն յատկացուցչին ասացաք: Սերթ ևս կրկնի նախդիրն առ երկոսին իսկ, առ բացայայտեալն և առ բացայայտին. մանաւանդ ուր ընդ մէջ անկցի սյլ ինչ մասն բանի. զոր օրինակ,

Պետրոս Հիմն եդ. եկեղեցւոյ յալին արեւելեաց Հոռով: Կրկն լեւս պարտ է մեզ ստանալ զհաւասար և զարեւելեան վարոց.

Երկն լեւս պարտ է որ ունենանք, հաւասար ու վարոց արեւելեան.

Իզգումորը քի իքի գանատրմըղ օլսուն, տին, վէ մէշրէպ սալիհիղի:

Յորժամ զիջնորդն աւելայն աշխարհէ զարեւելի Կոյն բարեխօս ունիմք առ աստուած, հաւատամք, եթէ լսէ հայցուածոց մերոց:

Յատուկ անուանք տեղեաց 'ի լինելն նախագաս, բազում անգամ իբրև զհասարակ ածական անուանս նախդրիւ հօլովին, է՝ զի համաձայն ևս զնին հօլովով. զոր օրինակ,

'Ի ծովանալ 'Սեղոս գեոց և խառնակել զսահմանս արտորեից կոիւք և սպանմունք լինելին.

Երբոր 'Սեղոս գեոլը իլլապնար ու արարելունն սահմանները իլլապնէր, իտի ու սպաննո-լիւննէր իլլապնին:

'Սել չայրնըն ճէօշիւպ տէ թառլարը պիր պիրինէ գարըշտըրըղը զաման, չօգ գալկալար վէ գան օլուրուտու:

Իչր վիլիպպոս 'ի Ռեւայիդոս 'է չաղաքէ Լ'նդրեայ և Պետրոսի:

Իսկ 'ի լինելն յետագաս՝ համաձայնին միշտ հօլովով:

Յատուկ անուանք մարդոյ 'ի նախագաս լինելն ևս համաձայնին սովորաբար 'ի հօլովն. որպէս,

Ըստ 'Սեբոնի-իայեբէ հոովմայեցւոց գլխատեցաւ Պօղոս առաքեալ 'ի Հոռովմ քաղաքի.

'Սեբոնին հոովմայեցիներուն իայեբ արեւել Հոռովմ քաղաք Պօղոս առաքեալին գլխաւը իբրեցին.



Բօմաստա՝ Աէրօն բօմալըլարըն շէզարըն վադթընտա  
Պօղոս հէվարիունուն պաշընը քէստիլէր :

Ընաջին հալածումն քրիստոնէից եղև 'է Տրայիանոսէ  
արայիէ :

Ըրչակ թագաւորեցոյց Վէղէայր է-ր Վաղարշոյ 'ի վե-  
րայ հայոց :

Սակայն երբեմն դուն ուրեք անհամաձայն ևս դը-  
նին 'ի նախադասիլն, վասն որոյ շէ բարւոք յաճախ 'ի  
վար արկանել. զոր օրինակ,

Եւ հրաման յօգոստոս կայսերէ աշխարհագիր առնել  
ընդ ամենայն տիեզերս :

Գ Լ Ո Ի Խ Ե Լ :

Յաղագս էսիան Բայից :

Եսկան բայք սովորաբար պահանջեն ունել զերկուս  
ուղղականս՝ յորոց զմին անուն բայի, և զմիւսն ուղղա-  
կան խնդիր ասեն : Ընուն բայի ասի ուղղական հոլովն՝  
զորմէ են բանքն. որպէս, Բարձր էն Երկինս, աստանօր  
բանքն են զերկնից. ապա Երկինս է տէր բային : Ուղ-  
ղական խնդիր ասի սյն՝ որ ցուցանէ թէ որպիսի ինչ  
իցէ տէր բային, որպէս 'ի յառաջեղեալ օրինակին ա-  
նունդ Բարձր զորպիսութիւն Երկնից ցուցանէ :

Սուղ է կենցաղս. Ալեանիւրնիս կորճ է. Եսմբիւմիւղ  
գըսսա տըր :

Խօղ տղմասէր է և խառնակեր :

Փափուկ և դիւրադարձ է լեզու :

Ըշխարհ հայոց մեծ է և արգաւանդ :

Յանկալի և քաղցրաբան է խոնարհ, և զուարթագին  
են երեք նորա :

Սէրն է պատճառ բարեմտութեան :

Բայց բազում ուրեք ըստ պատշաճի բանիցն մին  
յերկուց ուղղականացն 'ի բաց թողեալ լինի :

Սակաւ ուրեք ուղղական խնդիրն դնի 'ի նախորիւտրական կամ 'ի ներգոյական :

Ըբրահամ եղև յապօ Տէժ և 'ի Բաղուհ :

Սնվեստ յորդէգիլս եղև գտտերն փարաւոնի :

Եղիցուք մէք ձեզ 'ի ծառայս : Ըյսինն, ծառայ :

Եթէ էական բայք սեռական հոլով խնդիր առնուցուն, յայնժամ նշանակեն ունէլ : Արպէս և 'ի տաճկաց լեզու փոխանակ ունէլ բայիս սովորութիւն է 'ի կիր առնուլ զէական բայս տալով նոցա խնդիր սեռական հոլով : Տես յառաջին մասին (էջ, 108.)

Ար ինչ քո իցէ, մի կորուսաներ, զի կամ գտանես զնա, կամ ոչ :

Ինչ որ չուր է նէ թէ խորանցընէր, ինչու որ իմ ինչ գործն, իմ լին գործն :

Սէ քի սէնին իսէ գոյպ էթմէ, զէրէմ եւ պուլուրսուն եւ պուլմաղսրն :

Իուսնի չիք էր լոյս առանձին, այլ յարեգակնէ գայ 'ի նա լոյսն :

Ընն թոջ էին երկու որդիք : Ընն թէ եղբարք հինգ :

Ղովոյ էր ոչխար և արջառ, և անասուն :

Արչափ և իցէ չ, ըստ նմին արասցես զզորմութիւն :

Ուրեք ևս նշանակէ գործ, պաշտօն և այլն :

Ճշմարիտ և առաքինի վարդապետի է, երբեմն ողորքել և խրատել, երբեմն սաստել և յանդիմանել :

Ըղէլ ու առաքինի վարդապէն (գործն) է, երբեմն սիրաբար ունէլ ու խրատել, երբեմն լինել ու յանդիմանել :

Իյի վէ ֆազիլէթլի ուստայա վէրկի տիր, պաղը քէրրէ օզչամագ վէ նասիհաթ վէրմէք, վէ պաղը տէֆա ազարլամագ վէ թէքտիր էթմէք :

Ըչաց է տեսանել, ականջաց լսել, ոնգաց հոտոտել, քմաց ճաշակել, շոչափելեաց զգալ : Ըյսինն, աչաց գործ կամ պաշտօն է տեսանել, և այլն :

Ըուստացուցանել զպտուղս անձրևաց է, իսկ կորուսանել խորշակին :

Իսական բայն ըստ վայելչութեան և ըստ հարցմանն մարթի յամենայն հոլովս առնուլ իւր խնդիր բնութեան :  
 Հիւանդն 'ի գոհոյն յայտ է :

Յօրանջելն 'ի լեռն-լեռնէ մարմնոյ լինի :

Սկիզբն պատերազմաց՝ յագահո-լեռնէ մարդկան եղև :

Ըսր բարկացող տգեղ է կերպարանօք :

Ըսորժելի է խնձոր արտա-լեռնէ և հոսոյն, և ճաշ-  
 փո :

Ըրմաւենի բարձր է հաստիտ, և քաղցր պարոյ :

Կերակուրքն և ըմպելիքն ոչ անխորհո-լեռնէ և յա-  
 ճախո-լեռնէ, սյլ պարի-շարո-լեռնէ և չափա-որո-  
 լեռնէ եղիցին :

Դ ի կնիցողս յայս ոչ վայելչականք մնացականք են, և  
 ոչ տրտմականք :

Ղառն է 'ի սկսման առաքինութիւն, և յետոյ քաղցր :

Ըտարինո-լեռնէ սխելո-տարին լեղէ է, ու էպսլ անուշ  
 (ի-գոյ) :

Յաղելէթ պաշլանկըճընտա աճը տըր, լաքին չիհայէ-  
 թինտէ թաթլըլանըր :

## Գ Լ Ո Ի Խ Խ Ը :

Յողագոս Ընոսանտիան Բոյից գնելոյ վաճառելոյ ու ա-  
 նոսանցն՝ որք զժամանակ ցոսյանէն :

Են բայք ինչ, որպէս ասել, իուլ, անոսանել, և  
 այլն. որք կրկին ուղղական պահանջեն, զմին՝ 'ի տէր  
 բայի, և զմիւսն՝ յուղղական հոլով խնդիր. զոր օրինակ,  
 Բժիշկք զչափաւոր կերակուրս մայր առողջութեան  
 ասացին .

Բժիշկները չափա-որ կերպի-որը տոողջո-լեռնէ մայր ընն .

Հէքիմէր գարէր եէմէյէ սաղլըգ սէպէպի տէտիլէր :

Օմարդ յաղթանդամ հսկայ անոսանէն :

Հոմերոս հոյր անուանեցաւ ամենայն քերթողաց :

Սովորութիւն է մարդկան օր կոչել զերկուտասան ժամն միայն, ցորչափ արեգակն 'ի վերին կիսագունան կայցէ :

Անուն աշխարհիս մեր կոչի յանուն նախնոյն մերոյ շայկայ, հայ :

Եթանոսք զերկինս վասն այնչափ մեծութեան, և զլուսաւորս վասն առաւել պայծառութեան աստուծոյ կարծէին :

Նախանձոտն զանձն միայն համարի զբնակ 'ի բաւրեաց, և զամենեսին 'ի փառս լայելեալ :

Բայք վաճառելոյ և գնելոյ 'ի սեռական հոլով առնուն զխնդիր :

Ոչ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին .

Երկու ճնճղուկ մէկ սպիւն չէ ծախվելի մի .

Իբրի սերչէ պիր ահճէէ սաթըլմազ մը :

Վաճառեցին յոյսէփի թանդաւիտինի :

Ասնն ցծերն թանոյ վաճառես, ասէ ցնոսա ծերն, ասն ասն իողոյ, ասնն ցնա, կարի ծանր են, եթէ կամիս իողոյ իողոյ առնումք :

Բստ այսմ 'ի սեռական հոլով գնի. եթէ հարցցի քանի՞ ամաց, թան՞ արժան :

Վախճանեցաւ յոյսէփի ամաց հարիւր և տասանց .

Յովսէփ հարիւր աստը արժան մտաւ .

Յոյսէփի եիւզ օն եաշընտա էօլաիւ :

Աղէքսանդր Երեւոնն և Երկոյ ամոց եղեալ վախճանեցաւ :

Իչք սյրի ամոց իբրև ուլեսոն և չրից :

Նոյ էր ամոց իչք հարիւրոց, և ջրհեղեղ ջուրցն եղև 'ի վերայ երկրի :

Անուանք՝ որք ցուցանեն զժամանակ՝ դնին յերկուս հոլովս, 'ի հայցական և 'ի ներգոյական, ('ի բաց առեալ զպարառականն որ ցուցանէ զանորոշ ժամանակ) :



Ղնի 'ի հայցական հոլով՝ ուր զտևողութիւն ներգործութեան ցուցանէ, և հարցեալ լինի՝ որքան ժամանակս, որչափ արեւն. նէ՞ գատար լուսնի:

Եղև անձրև զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. Բառասուն օր բառասուն գիշեր անյրե՛ եկաւ .

Ղրրգ կիւն գրրգ կէճէ եաղմուր եաղար:

Գ. Որչափ ատենն. Պ. քառասուն օր:

Գ. Ա՞նչ գատար վագրթ. Պ. գրրգ կիւն:

Որգիքն իսրայելի կերան զմանանայն զբառասուն մ, մինչև եկին 'ի շէն երկիրն:

Տունան եղև 'ի փօր ձկանն զէրէս արեւ և զէրէս գիշեր:

Ըջեցաւ յիսուս յաշխարհի զմն էրէսուն, ոչ յայտնեալ զփառս աստուածութեան իւրոյ:

Ըջ ջրհեղեղաւ զմն ողջոյն ապականեալ կայր երկիր:

Ղոյնպէս դնի 'ի սեռական հոլով, մինչ զժամանակին շարունակութիւն ցուցանէ:

Սերժեցաւ քուն յաչաց իմոց զգիշերս զայս .

Ը գիշեր բունս աչէս փոխաւ:

Պու կէճէ ույգում կէօղիւմտէն գաչար:

Օբառասունն և զէրէս մ շինեցաւ տաճարն:

Ոմանք 'ի կենդանեաց զբառային եղանակն ոչ ըմպին:

Բազում ուրեք ևս դնի յանորոշ հայցական:

Սնվէս՝ իրրև ծնաւ, թագուցաւ ամիսս երիս 'ի ծնողաց իւրոց .

Սնվէս՝ երբոր ծնաւ, իր ծնողքս իրէս մին պահեցին .

Սնվէս նէզաման քի տօղտույուսա, քէնտի աթալար իւչ սյ սագլատրլար:

Կենդանիք՝ եթէ որոյնն էնչ ժամ զօղոյս տուրևառութիւն ոչ ճաշակեն, մահանան:

Սօղոս եղև 'ի դամասկոս ասորս էնչ:

Ըրար հարսանիս ասորս շրէբառասուն:

Իշխանութիւն նեոին ձգի միսս էրէս և ին:

Տիրան զոյնս ոչ սոխա ժամանակն ընդ իւրև նուաճեալ հնազանդէր:

Ըստ այսմ ասի ևս՝ շրջէլ ժամանակն բազմա:



Վարդ թէ ժամանակի ընդ յեւ իմ: Լոյսն անդ ժամանակս ինչ: Լանդիշէլ սուրբ թէ:

Լորբեն մարթի միոյ և նոյն բանի զնիլ 'ի հայցական և 'ի ներգոյական հոլով, զի զժամանակին շարունակութիւն միանգամայն զերբն և կամ զչափն ցուցանէ: Վարտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո զամենայն աւուրս կենաց քոց:

Լորենիդ արքիմիտրք սուրբն սու հացդ բոլոր սու ինչացդ թէ:

Պիութիւն էօմրիւնիւն կիւնիւնտէ աննընըն թէրկիլէ նաֆագանը եէյէսին:

Չամենայն աւուրս կենաց իմոց ոչ դադարեցայց օրհնել զքեզ քրիստոս փրկիչ աշխարհի:

Լսապէս ասի ևս՝ զարեւ և զհիշէր ինչու, զչայդ եւ զէրէի գործէլ զորս մարթ է դասել և 'ի կարգս մակրայից: Ստանայ եցոյց զամենայն թագաւորութիւնս 'ի լայնիւն ժամանակի:

'Ի լից սուրս կատարեաց զգործ իւր:

Ըստ սմին օրինակի ասի ևս՝ 'ի գիշէրէ և 'ի սուրբն ընտն, և յախնայն ժամոս ժամանորէլ զաստուած:

Ղանի 'ի ներգոյական հոլով, յորժամ լինի հարցումն՝ երբ, նէ զաման:

'Ի մանկութեան առաւել տնկի խրատ ծնողաց 'ի միտս մանկանց:

Տղայութեան արեւը ծնողաց խրատ ազէլ իւրնիւնէ սուրբ զոյս թէ:

Չօճուգ քրսմընըն ֆիքրինէ քիւչիւք ևաշընտա աթալարընըն նասիհաթը էյիճէ թէքսիթ էտէր:

1. Լորբ. Պի. տղայութեան ատենը:

2. 'Եզ զաման. Պի. քիւչիւք ևաշընտա:

Յերթասարդութեան՝ մտացդ խոկումն արթուն է, և մարմնոյդ հասակ առոյգ և գործասէր:

Սեռաւ արրահամ 'ի բարութ ձերութեան:

Ըստեղբ յայտնապէս 'ի գիշէրէ երևին, և 'ի ծագել արևու՝ ծածկին:

Տղայք բնաւորեցան յեօլնիլրորդսմ ամեան հանել

զատամունս, և յաւելն առն փոխել:

Խոտ՝ վայելչական և կանաչագեղ է՝ Է գարնանային ժամանակի:

Ոմանք ՚ի տնկոց ՚ի յերայնի անթառամ մնան:

Օտոք ՚ի յերայնի հանգչին, ՚ի գարնայնի ծաղկին, յամբայնի պտուղ սնուցանեն, և յաշնայնի հասուցանեն:

Յաւորս սողովմանի ոչ էր համարեալ արծաթ, թէ իցէ ինչ:

Յօրինակդ որ զկնի՝ զերկոսին հարցմունս ևս է տեսանել<sup>1)</sup>:

Օվէց որ գործեսցես, յաւորն եօլնեբորդի մի գործեսցես. զի զվէց որ արար աստուած զերկինս և զերկիր. և հանգեաւ յաւորն եօթներորդի.

Սէց որ գործէ, եօլնեբորդ որը մի գործէր, ինչո՞ւ որ վէց որ սրեղծեց աստուած երկնիս ու երկրը, ու եօլնեբորդ որը հանգչեցաւ.

Եթը կիւն իշէյէսին, եւտինճի կիւն իշէմէյէսին, զէրէ ալթը կիւն եարատոր ալահ կէջիւ վէ եւրի, վէ եւտինճի կիւն ոահաթլանտը:

<sup>1)</sup> Թեպէ որ աս հարցումն՝ որչափ ժամանակս, պարասխանին է հայցական հոլով, և աս հարցումն՝ երբ, է ներգոյական. Բայց ուրեք ուրեք լինի խորորումն, որպէս,

Երբեքս յեսուս յաշնարհի յամս երեսուն. փոխանակ ասելոյ, զամս երեսուն:

Օայս խորորումն յերինն ժամանակս սերականք շինելեալ էն, կարծեալ այնպէս լի հայցականն զներգոյականն ունիցի զբոսնիւն կամ հայրայ իցէ:

Գ. Լ. ՈՒԽԻՍ (Թ. :

Լուսինն գիտեւէ 'ի վերայ Բայնց' որոց ինչորաւոր-լէւնն  
լինի նախորդ-լէւնէս ընդ իմ նախորդի :

Ընդ նախադրութեան բազմադիմի է նշանակութիւնն :  
Ուր իմաստ բանին տարածումն ինչ իմացուցանէ ,  
բայն պահանջէ իւր խնդիր 'ի տրական հոլով հանդերձ  
նախադրութեամբս Ընդ :

Լնուն քրիստոսի փառաւորեսցի ընդ ամենայն տիե-  
ղերս .

- Վրէնորոն տնունը քառասորվէ ամեն աշխարհի մեջ .
- Վրիստոսուն իմի տիւնեանըն տէօրտ թարափընտա  
իհիշումլանսըն :

Լմենայն եկեղեցիք ուղղափառաց , որք ընդ Գիւղս  
են , մի են :

Ըջէր յիսուս ընդ չաղաչս և ընդ գիւղս , և ուսու-  
ցանէր :

Նրէսյք ցրուեալ են ընդ աշխարհի հէլանոսս :

Լեւտարանն համատարած քարոզեցաւ ընդ աշխարհի  
Երկր , ընդ Ժով , և ընդ ցամաք , և ընդ իղւիս :

Եղև սով մեծ ընդ աշխարհի Երկր :

Ստամոքսն ընդունի զկերակուրս , և բաժանէ զոյժ  
զօրութեան ընդ յօգս , և ընդ անդամս մարմնոյն :

Ըսյք՝ որ անցումն տեղւոջէ 'ի տեղի յայտ առ-  
նեն , պահանջեն իւրեանց խնդիր 'ի նախորդի տրական  
հանդերձ նախադրութեամբս ընդ և այս նախորդի տրա-  
կան յաշխարհիկ և 'ի տաճկական լեզու բացատրի 'ի հո-  
լով բացառական :

Ստէք ընդ նեղ դուռն , զի անձուկ է ճանապարհն որ  
տանի 'ի կեանս .

Սեղ Կանէն Տալէս , ինչու որ նեղ է ճամբան , որն որ  
արայոր-լէւնն իլլաննի .

Տար գափուտան կիրինիղ , զիրա (էպէտի) էօմիւրէ  
կէօթիւրէն եօլ էնսիղ տիր :

Ար ինչ մտանէ ընդ Բէրան, ոչ պղծէ զմարդ :

Վիւրին է մալխոյ ընդ ծալ ասղան մտանել, քան մեծատան յարքայութիւն երկնից մտանել :

Ընդ պրոնն ածեմք 'ի տուն զամենայն գոյս պատուականս և պիտանիս, և ընդ նոյն դարձեալ՝ եթէ ինչ անպիտան է, արտաքս հանեմք :

Ընդ որ գնայ արեգակն տիւ է, և ուստի գնայ գիշեր, 'ի վերին կիսագունտն և 'ի ներքինն :

Ընդ իորոն-Լիւն ջրոյ լոյս ոչ անցանէ :

Վաւիթ քարիւ եհար զճակատ այլազգւոյն, և եմուտ քարն ընդ սողաւորսն 'ի ճակատն :

Երբայցեցիք ելեալ յեգիպտոսէ անցին ընդ ծովն Իսրայել :

Ըստ այսմ ասի նաև՝ Իսրայել ընդ պատուհանն .

Խոնարհեալ նայել ընդ պատուհանն . ընդ մեջ կարել . ընդ այլ ճանապարհ գնալ . Յիշողել ընդ միս :

Սոյնպէս և նախագրութիւնն Սար նախգրիւ տրականաւ զբացառականի ունի զօրութիւն :

Ըստուած այնպիսի բարիս խոստացաւ, որ զանցանէ ըստ միտս մարդկան .

Ըստուած այնպէս Բարիքիւր Խոստացաւ, որ մարդուն միտքն լէր է .

Ըստ էջլէ պիր էյլիքէր իբրար էթտի, քի ինսանըն ֆիբրինտէն չօգ եօզարը տրը :

Ըրարածք ոչ երբէք անցանեն ըստ եղեալ սահմանս իւրեանց :

Են բայք ինչ որք նախգրիւս ընդ առնուն խնդիր 'ի տրական հօլով . զոր օրինակ, խնդուլ, որբախ լինել, նախանջել, պրոմիլ, պրմանալ, սահնչանալ :

Օնողք ուրախանան ընդ յատուցութիւն-Լիւն որգւոց .

Օնողք ի որբախանան պղոց տառ ի բլաւուն վոյ .

Ըթալար էվատլարընըն իլէրիլէմէսինէ սէվինիրլէր :

Ս նասասէքն խնդայ ընդ իտի :

Յորժամ խնդամք և ուրախ լինիմք ընդ յատուցութեմ եղբարս, մասնակից լինիմք պսակաց նոցա :

Օստուած բարկացուցանեմք, յորժամ ընդ Բարիս այլոց արտմիմք :



Ոչ նախանձին բարիք ընդ շարս, այլ չարք ընդ բարին :  
Բազումք սքանչանային ընդ ճգնող-էլան սրբոյն ան-  
տոնի :

Սանկունք փոքունք թողեալ զմեծամեծս, որք ոչինչ  
արժեն՝ ընդ այն զարմանան :

Սերթ նախադրութիւնս ընդ վարին փոխանակ 'ի  
նախդրի :

Յովհաննէս ունէր գօտի մաշկեղէն ընդ Տեղ իւր :  
Այսինքն, 'ի մեջս իւր :

Հայեաց ընդ Էրիկն և թուեալ զաստեղս. եթէ կա-  
րիցես թուել զնոսա : Այսինքն, Հայեաց յերկինս :

## Գ Լ Ո Ի Խ Ժ :

Յարագս ածախան անուանց :

Ս համաձայնութենէ ածական անուանց ընդ իւրեանց  
գոյականացն խօսեցաք վերագոյն : Ս նայ մեզ արդ խօ-  
սել զմասնաւոր ինչ գիտելեաց, զորս յերիս յօգուածս  
բացայայտեսցուք :

## Յ օ դ ու ա ծ նի :

Յարագս բողբոջախան և գերաբոջախան ածախանաց :

Ս վեր անդր (Էջ, 139.) ստացաք լինել զերիս աս-  
տիճանս ածական անուանց, այս է դրական, բաղա-  
տական, և գերադրական :

Բազդատականքն 'ի ռամկական և 'ի տաճկական  
բարբառ առնուն ինդիր 'ի բացառական հոլով. զոր օրի-  
նակ,

Լն պղտիկ աստղն ալ աշխարհքէս մեծ է.

Լն քիւչիւք երլտրղտա տիւնեատան պէջիւք տիր :



Բայց 'ի գրոց լեզու առնուն հայցական հանդերձ նախադրութեամբս թան :

Վլուխն պատուականագոյն է քան զամենայն մասունս :

Վլուխը ամեն մասունքներէն աւելի պարտաւոր է :

Պաշ հէր էզալարտան զիատէ գրյմէթլի տիր :

Օհնչ գեղեցկագոյն թան զսիրամարգ :

Իմաստութիւն պատուականագոյն է թան զտխնս պարտաւոր :

Իռն լաւագոյն է թան զքարի բնս :

Չիք մեծագոյն յառաքինութիւնս և կարևոր թան ըզհամբերութիւն :

Վրականքն ևս ընդունելով խնդիր 'ի հայցական հոլով հանդերձ նախադրութեամբս թան , զբաղդատականի ունին զօրութիւն :

Եւքն կարևոր է քան զամենայն անդամս :

Եւլը ամեն անդամներէն աւելի հարկաւոր է :

Կեօզ հէր էզալարտան զիատէ իրտիզալը տրր :

Բարձր է հայք թան զամենայն էրիլի :

Եռիւծ հզօր է թան զամենայն ինդամնիս :

Չկունք մեծ են և յաղթանդամ թան զամենայն ինդամնիս :

Տեսիլ աչաց հաւատարիմ է թան զլուր ամենջուց :

մարմնով ելանէին 'ի գետոյն :

Եւլ օրինակ :

Իջին եղբարքն յովսեփու տասնէքին գնել ցորեան  
յեգիպտոս , և զբննիամին զեղբայրն յովսեփու ոչ ար-  
ձակեաց յակոր ընդ եղբարսն . քանզի ասէր , թէ դուցէ  
պատահիցէ նմա հիւանդութիւն : . . . Օտանեալ յովսեփ  
զեղբարսն իւր , և նորա ոչ ծանեան զնա , յիշեաց յով-  
սեփ զերազն իւր , և ասէ ցնոսա . լրտեսք էք դուք , և  
դիտել զել և զմուտ աշխարհիս եկեալ էք :

Լուծումն :

Տասնէքին եղբարքն յովսեփու իջին յեգիպտոս  
"է գնել ցորեան , և յակոր ոչ արձակեաց զբննիա-  
մին զեղբայրն յովսեփու ընդ եղբարսն . քանզի ասէր ,  
թէ դուցէ հիւանդութիւն պատահիցէ նմա : Յովսեփ  
ծանեալ զեղբարսն իւր , և նորա ոչ ծանեան զնա , յով-  
սեփ յիշեաց զերազն իւր , և ասէ ցնոսա . դուք էք  
լրտեսք , և դուք եկեալ էք "է դիտել զմուտ և զել  
աշխարհիս :

Օրինակ :

Ասէ ոմն 'ի ժողովրդենէն ցնա , վարդապետ ասա  
ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգութիւնն :

Լուծումն :

Ոմն 'ի ժողովրդենէն ասէ ցնա , «ձ վարդապետ ,  
դու ասա ցեղբայր իմ բաժանել զժառանգութիւնն  
ընդ իս :

Իսկ պարզելի մթութիւնքն են այս , եթէ յարա-  
բերական դերանուան եզականն իցէ փոխանակ յոգնա-  
կանի եզեալ , պարտ է յոգնակի ասել . զանորոշ հայցա-

կանն որոշել, աներևութին առ ՚նախդիր եթէ զեղևալ իցէ, զնել ՚ի վերայ, նոյնպէս և անուն բային եթէ չիցէ, և զայն զնել ներգործութեամբ, և այլն, այսպէս,

**Օրինակ:**

Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ զնէ ՚ի թագստեան, և ոչ ընդ գրուանաւ, այլ ՚ի վերայ աշտանակի, զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն:

**Լուծումն:**

Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ զնէ ՚ի թագստեան, և ոչ ոք Գնէ ընդ գրուանաւ, այլ Գնէ ՚ի վերայ աշտանակի, զի որք մտանեն՝ տեսանիցեն զլոյս:

Տես զվերոյեղեալ օրինակս:

Շարագրութեան երեք ազգք են, պարզ, Ֆլուի և Խրիչն: Պարզ ասի յորժամ բառքն ընտելք իցեն և կարգ բանին բնական:

Ե. յսպիսի են Վարք Զարանց ՚ի խրատականն. Յայսմաւորքն. յաստուածաշունչ գրոց հինգ գիրքն Սոլսեսի. Յետու. Գատաւորք. Թագաւորք. Մնացորդք. չորք Էւետարանք. և այլն:

Յամենեսին ՚ի սոսա երեւի ուրեք ուրեք և վայելչութիւն ոչ սակաւ:

Միջակ ասի շարագրութիւնն յորժամ բառք բնտիրք են և վայելուչք և շար բանին շրջուն. օրինակ իմն՝ եթէ ընդ անական և ընդ գոյական՝ ընդ յատկացուցիչ և ընդ յատկացեալ այլ ինչ մասն բանի ՚ի մէջ մտցէ. յաճախակի համաձայն գնայցէ ընդ գոյականի իւրում նախադաս անականն, և որ այլ ևս սոցին նման:

Ե. յսպէս են սովորաբար յաստուածային գիրս Իմաստութիւն, Յովբ, Յուդիթ, Էռակք, Եղովորդ, Գործք առաքելոց, բաղումք ՚ի թղթոցն Պողոսի, Կաթուղիկեսայց թուղթք Պետրոսի:

Ի վարդապետականն Յաճախապատումն, Եղնիկ, Եղիշէ, Սամբրէ, Գրիգոր արշարունի, Խոսրով, Աէրսէս շնորհալի, Սարգիս, Իգնատիոս, Լամբրոնացի

'ի Ճառսն, և յատենարանութեան, Աշտարկ հարանց 'ի Ճառս ինչ :

'Ի սոսա յաւէտ փայլէ վայելչութիւն եթէ ընտիր ընտիր բառից և եթէ իմաստից, մանաւանդ Աշտարկ, Աշտարկ, 'ի Շնորհալի, Ազնատիոս, 'ի Սարգիս և 'ի Ամբրոնացի :

Խորթին է եթէ ընդ մթին և անսովոր բառիցն և շարն արտաբոյ սովորականին իցէ, վասն որոյ և առանց պարզութեան ոչ ամենեցուն իմանալի :

Այսպիսի ինչ են Սակարայեցիք . Ագաթանգեղոս, Խորենացի, Վառիթ անյաղթ, Վրիգոր մագիստրոս, Յովհաննէս կաթողիկոս, և Վարեկացի :

Խորթին շարագրութեան վսեմն ասի Գեղաման, որպիսի են Սակարայեցիք, Ագաթանգեղոս, Վարեկացի 'ի բազում տեղիս, և ուրեք ուրեք Խորենացի 'ի գիրլս պիտոյից :

Վիտելի է և այս, զի չիք և ոչ մի ինչ մատեան կամ գիրք որ բովանդակ զնոյն ոճ ունիցի : 'Ի պարզ ասացեալ գիրս իսկ ուրեք ուրեք փայլի վայելչութիւն քան թէ 'ի միջակս, և 'ի միջակ գիրս գտանի և՛ պարզն և՛ գերապանծն :

Այսչափ ինչ շատ լիցի ասել յաղագս մերոց նախնի մատենագրաց . դիցուք և զօրինակս ըստ տեսակացն իւրաքանչիւր, պարզի, միջակի և խորթին շարագրութեանց :

### Օրինակ պարզ շարագրութեան :

Հարցեալ եղև երբեմն հայրն դիոս 'ի զինուորէ ումեմնէ, եթէ ստուգապէս գոյ ապաշխարութիւն, և ընդունի՞ աստուած զգարձեալն : Իսկ ծերն 'ի ձեռն բազում առակաց և օրինակաց հաւատացոյց զնա, եթէ ճմարտապէս գոյ ապաշխարութիւն : Ալ զայս ևս ասէ ցնա . առ սա ինձ սիրելի, եթէ պատառեսցի քղամիդ քո՝ 'ի բաց ձգես դու զնա, և ասէ ոչ ձգեմ . այլ կարեցից և զգեցայց : Իսկ ծերն ասէ, արդ՝ եթէ խնայես դու 'ի հանդերձ քո . ոչ ևս առաւել խնայեսցէ տէր 'ի ստեղ-

ծուածս, որ վասն ամենայն մեղաւորաց յորդի իւր սիրելի ոչ խնայեաց, և արդ նովաւ պարգևեցէ մեզ ապաշխարութիւն և թողութիւն մեղաց: Ալլա՛հ հարանց. Էբէս, 227:

( ) Երևալի Բեշտի շարագրութեան:

Վէպ եղև եղբարս եօթն մարըն հանդերձ կալեալս, ածել յատեան թագաւորին, 'ի խոշտանգանս գանի տազնապէին ուտել խոզենի: Ա'ի 'ի նոցանէ նահատակեցաւ յառաջագոյն. սկսաւ խօսել և ասէ. զի՛ կայք անցեալ, կամ զմեզ զի՛նչ հարցանելոց էք. մէք պատրաստ եմք 'ի մեռանել քան անցանել ըստ օրէնս հայրենիս: Տարկութեամբ և սրտամտութեամբ լի՛ եղև թագաւորն, հրամայեաց ջեռուցանել տապակս և կաթսայս, և անիւս, և պէսպէս գործիս տանջանաց պատրաստել: Օսյս իրրև վաղվաղակի ջեռուցին պատրաստեցին հրամայեաց զնահատակն յառաջ մատուցանել, և նախ զլեզուն կտրեցին, և զգլխոյն մորթն զերեսօքն դարձուցին. և ապա զոտս և զձեռս առաջի մօրն և եղբարցն ծայրաքաղ առնէին: Այլ ապա իբրև 'ի բանից և 'ի ձեռաց անպիտանս առնէր՝ հրամայէր կենդանոյն 'ի տապակսն ջեռուցեալս իջուցանել: Այլ իբրև ձենձերն ընդ երկար՝ այսպէս 'ի տապակէ անտի ելեալ դիզացեալ ծառանսյր, սկսան եղբարքն ընդ միմեանս մարըն հանդերձ մխիթարել և ասել. քաջութեամբ մեռցուք, զանուն և զոգիս ժառանգեսցուք: Հայի տէր աստուած 'ի ճգնութիւն պատերազմիս մերոյ, և 'ի ծառայս իւր մխիթարի՛ որպէս յայտյանդիման ասաց մովսէս յորհնութեան իւրում: Իբրև առաջինն զօրինակ զայս յաշխարհէ փոխեցաւ: Օքրկորդն 'ի տեղի տանջանացն մատուցանէին, և զգլխոյն մորթն վարսիւքն հանդերձ զերեսօքն արկանէին. և անդէն հարցանէին, կերիցես, ասն խոզենի միս, մինչև ամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է: Աս ետ պատասխանի իւրեանց բարբառովն և ասէ, ոչ: Ասն սյսորիկ և սա 'ի նոյն տանջանսն տանջեալ վախճանէր: Իբրև յոգւոցն պարզել ապաստան



եղև, սկսաւ խօսել՝ և ասել ցԹագաւորն . այ սէգ հպարտ  
 և ամբարտաւան, դու զմեզ յայսց կենաց աշխարհիս  
 կարճել համարիս . իսկ այն որ աշխարհաց Թագաւորն է՝  
 Թէպէտ և մեռանիմք մեք վասն օրինացն, 'ի կեանսն յա-  
 ռիտենից 'ի միւսանգամ՝ ծննդեանն ժամանակի՝ կենաց  
 'ի կեանս դարձուցանէ : Հետ նորա զերբորդն ամին, և  
 զլեզուն խնդրէին . նա վաղվաղակի մատուցանէր, և  
 զձեռոսն քաջասիրտս տարածանէր . զի և Թագաւորն  
 ինքնին զարմացեալ լինէր վասն պատանւոյն ուշիմ  
 մտացն, և սրտին քաջութեան . զի առ ոչինչ զցաւսն  
 համարեցաւ : Այս սա իբրև փոխէր՝ չորբորդն 'ի տեղի  
 մատուցեալ 'ի նոյն տանջանս չարչարէին : Իբրև շունչ  
 վախճանի հասանէր, խօսել սկսաւ սյսպէս . մեզ լաւ է,  
 զի փոխիմք աստի 'ի մարդկանէ . և յուսոյն ակնունիմք  
 միւսանգամ ծննդեանն յարութեան մեռելոց, քան քեզ  
 'ի կենդանիս . զի արգելեալ փակեալ է 'ի քէն յարու-  
 թիւն մեռելոց : . . . Հետ այսորիկ ամեալ վեցերորդն,  
 և իբրև մերձ եղև 'ի մեռանել՝ ասէ, զի՞ մոլորեալ ես  
 տարապարտուց . ընդ մեզ այս անցք որ անցաննն վասն մեր  
 մեղաց, զի մեղանչեմք առ աստուած արժանի զարմանա-  
 լոյ : Եւ այց դու մի ակնունիցիս ողջանդամ բարեմիտ ապ-  
 րել յաստուածամարտ մարտուցեալ : Այս առաւել բա-  
 րեաց յիշատակաց արժանի՝ մայրն սքանչելի, որ զայն-  
 պիսի զեօթն որդի յիւրմէ կորուսեալ 'ի միում աւուր  
 'ի միում ժամանակի վասն յուսոյն աստուծոյ քաջալե-  
 րեալ սրտապնդեալ զմի մի 'ի նոցանէ մտիթարէր իւ-  
 րեանց բարբառովն : . . . Անտիոքոս Թէպէտ և արհա-  
 մարհեալ զինքն համարեցաւ վասն բարբառոյ նախա-  
 տանացն . սակայն մինչդեռ ոգիքն կրսերոյ մանկան առ  
 իւր կային, սկսաւ ոչ միայն բանիւք մտիթարութիւն  
 մատուցանել . այլև երգմամբք հաստատէր՝ 'ի մեծու-  
 թիւնս յաւագութիւնս հասուցանել, երանելի առնել  
 յաշխարհի . միայն թէ 'ի նախնեացն օրինաց փոփոխե-  
 ցի : Իբրև ետես թէ ամենեւին պատանին 'ի բանս Թա-  
 գաւորին չխոնարհեցաւ, կոչեաց Թագաւորն զմայրն, և  
 աղաչէր՝ լինել պատանւոյն կենաց նորին խորհրդական՝



զի փրկեսցի: Իբրև կարի շատ ստիպեաց, յանձն առ  
 խօսիլ ընդ որդւոյն. խոնարհեցաւ 'ի նա. սկսաւ ծաղր  
 առնել զհպարտ զամբարտաւան թագաւորն, և ասէ: . . . .  
 Մի զարհուրիւր դու 'ի չարաշուք դահձէ այտի, այլ  
 եղբարցն արժանի եղեալ՝ ընտրեալ զմահ քան զկեանս  
 աշխարհի. զի ընդ այն եղբարս ընկալայց զքեզ 'ի ձեռս  
 ողորմութեան մեծին աստուծոյ: Աւ մինչդեռ մայրն  
 զայն մխիթարութիւնս մատուցանէր 'ի միտս հաստա-  
 տունս, սկսաւ խօսել պատանեակն և ասէ. ո՛ւմ կայք  
 զի՞ յապաղէք, չեմ ինչ լսելոց հրամանի թագաւորիդ,  
 այլ հրամանաց հնազանդեալ եմ օրինաց հարցն մերոց  
 որ տուան 'ի ձեռն մովսեսի: Այլ դու որ զամենայն չա-  
 րիս խորամանկեցեր 'ի վերայ որդւոցդ երբայեցւոց. . .  
 չես ինչ ապրելոց յամենագէտ յամենակալ դատաստա-  
 նացն աստուծոյ: Օ՛ի այժմիկ մեր եղբարք սակաւ ինչ  
 ցաւոց համբերեալ վասն կենացն յաւիտենից, և 'ի վե-  
 րայ ուխտի կտակարանացն աստուծոյ անկեալ կան մահու  
 տարածեալ: Այլ ես հաւասար եղբարցն իմոց զըունչ և  
 զմարմին մատնել պատրաստեալ ունիմ 'ի վերայ հարցն  
 օրինաց, յուսացեալ կարգամ առ աստուած, քաւութիւն  
 ազգին ամենայնի գտանել, և զքեզ մեծամեծ  
 տանջանօք հեծութեամբ խոստովանել՝ զի նա միայն է  
 աստուած. և այլ ոք չիք: . . . . Օհետ որդւոցն և մայրն  
 երանելի 'ի սոյն օրէնս կատարեցաւ: Այն որ ինչ վասն  
 հարցմանց զոհիցն, և վասն անհնարին տանջանացն՝ ցայս-  
 վայր ցուցեալ լիցի: Թ. Ս. Է:

Յօրինակիս յայսմիկ բազում ուրեք երևի և գե-  
 րապանձ շարագրութիւն:

### Օրինակ խրեան շարագրութեան:

Օանսպառ խաղացմունս աստուածայնոցն 'ի քեզ շը-  
 նորհացն, և զանդուլ հոգւոյն 'ի վերայ քո իմացուածոցդ  
 զչարժմունս՝ ծանեայ 'ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, յառաջ  
 քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զճանօթութիւն,  
 որ և սիրելի իմոց իսկ անտրժակացս է, առաւել ևս սովո-  
 րութեանցս:

Օպյա թուղթ, զոր գրեաց Սոփիէս խորենացի առ Սահակ բագրատունի որ խնդրէր 'ի նմանէ զՏայոց պատմութիւն, ըստ այսմ պարզելի է:

Եւ ծանեայ զանսպառ խաղացմունս աստուածային շորհացն 'ի քեզ. և զանդուլ շարժմունս հոգւոյն 'ի վերայ մտաց քոց 'ի ձեռն գեղեցիկ խնդրոյս: Եւ զէ "չ էր Խորենացոյն Երեսօր Բեւեմլ զ] Խնայ Բագրատունի, ասէ. Ինկալեալ զծանօթութիւն հոգւոյդ, յառաջ քան ընդունել զծանօթութիւն մարմնոյդ: Ար նաև ասոր ժակաց իմոց սիրելի է մանաւանդ սովորութեանս:

Գ Լ Ո Ի Խ ԺԻ:

Յողագոս վերժանութեան:

Վ Երժանութիւն որ է ընթերցողութիւն, այսպէս սահմանէ հին քերականն: Ս Երժանութիւն է հասն' յերկնայ խաչ շարագրաց անվար յառաջ Երեսօր: Ե յսինքն, վերժանութիւն է մասն քերականութեան, որ եթէ յերկնայ այսինքն ոտանաւորաց և եթէ շարագրաց այսինքն անոտն բանից զանսայթաք և զվայելուչ արտարութիւն ուսուցանէ:

Եւ քաջ ընթերցողութիւն երից պէտք են: Կախ՝ զի իւրաքանչիւր բառ ըստ իւրում բնիկ ձայնին արտարելիցի: Երկրորդ՝ քաջ շեշտել և բթել և այլն: Երրորդ՝ որպէս զհարգ վայել է զՏատուածս բանին որոշել 'ի միմեանց ստորակիտիւք: Եւ աջինն ուղղագրութեան ասի, երկրորդն ասոգանութեան՝ երրորդն արհուրութեան:

Ուղղագրութեան է քաջ մտադիր լինել զի մի ինչ 'ի գրչութեան կամ զնշանս վերժանութեան ոչ ըստ պատշաճի գնելով և կամ ընդ իրեարս շփօթելով ըզնշանագիրս վրիպակ լինիցի. գրելով օրինակ իմն օ փոխանակ ու, ո փոխանակ վեզի, Յա փոխանակ ցօի, զա փոխանակ սէի կամ յաի, և որ այլ ևս այսպիսիք:

## Յաղագս ասոգանութեան :

Նախնի մատենագիրք մեր զայլ և այլ նշանս առողա-  
նութեան ունէին, որոց կիրառութիւն այժմ խափա-  
նեալ իսկ է :

Այժմիկ 'ի կիրառութեան եղեալքն միայն են,  
չէշտ և պարոյն<sup>1)</sup> :

Շէշտն է այս գիծ ( ' ) և դնի 'ի վերայ գրոյ որոյ  
յարտարեբեղն 'ի վեր սաստելով ելանէ արտաքս : Այսն  
որոյ դնի շէշտ սովորաբար 'ի հրամայական եղանակս  
բայից, 'ի բացասական և 'ի ստորասական մակբայս, և  
'ի կոչական հորովն :

1) Աս նախնեօք ձարեղին թաւ, և սոսկ ասացեալ նշանս :  
Թաւ որ այսպիսի էնչ նշան է ( ' ), երբեալ լինէր 'է  
վերայ գրոյ ի . ի . ռ . շ . շ . շ . շ . շ . շ :

Իսկ սոսի որ է այս նշան ( 7 ) դնէին 'է վերայ աստից  
այսպիսի պ . ի . ր . ղ . ն . ծ . շ . ճ . ս . ր :

Օայս նշանս հետեւեալ էր նոցա, պէ մի անհասարկ  
զլատայանս ընդ նրբայանիցն շէնթեալ այլ ընդ  
այլոյ գրեւոցէն իմ հնչեացէն. որպէս, զքարն՝ կար  
ասելով, զթոյլն՝ դոյլ, զթուրն՝ տուր, զչարն՝ ճար,  
զառուն՝ արու, զցրեղն՝ ծուր :

Իսկ 'ի յեղին դարս համարելով սմանց զիւնն Տերէ յայ-  
նասոր և Տերէ Բաղայան, որ լուսէր նոցա, լին  
իբրև զվել հնչէ, լատանշան 'է վերայ դնէին, ցո-  
ցանել լին անդէն լատ հնչելէ է :

Այսպիսի վելպոյն խորձեաց և լինը արտաբերութեան  
պարճատ զայս ասել է Տեղ, իբր պէ ու իմ իւ պատմն  
խորի նմանայան էն ընդ վել պատմն. զոր օրինակ,  
աստուած էլի շրթամբս ամփոփելով ընթեանոցոս,  
հայ յայնասոր իր բնիկ յայնէն, ապա էլի 'է իմպ  
'է վեր իցեալ զէկոտար արտաբերեցէն, Բաղայան  
հնչէ այսպէս, աստրված որ է հուր :

Շին հարեմագիրք Տեր ձարեղին և զայլ Բաղամ նշանս  
ասոգանութեան և արհասութեան, որպիսի էն լարիս :

Որտե՞սի՛ լէ՛ր դո՛ւ ոչլրտած եւ արդար, զէ Բարէ լինե-  
ցէ յէ՛ւ :

Որ «ն ի մտցե՛ գործել, եւ ի երկցե՛ թ» :

Իսկ յայլ անուանս 'ի վերայ գերանուանց և 'ի մակ-  
բայս դնի ըստ վայելչութեան և ըստ պատշաճի իրացն :

Պարոյն սյսպիսի ինչ նշան է (°) որ 'ի հարցմունս  
արկանի 'ի գործ :

Ընդէր արդար էս : Արեւոյ արդեօք :

Ոչ արեւանէս : Օճնչ գործ գործելցեր :

### Յազակոս արտոնութեան :

Տրոհութեան նշանք են Ռո՛ւլ, Սո՛րոյնէր, Աէր,   
Աէրջնիէր :

Աէրջնիէր է այս զոյգ կէտ (:) և դնի յաւարտ  
բանին, ուր պարտն է երկար հանգիստ տալ կամ ոգի  
առնուլ, որպէս տեսեր իսկ զօրինակս յանձիւ տեղիս :

Սէրջնիէր այս նշան է (.) և դնի 'ի բանին ուր  
թէպէտ և ինքնին միտք բանին կատարեալ է, սակայն  
և ինքն մասն ինչ է պարբերութեանն, 'ի միջակիսին սա-  
կարիկ մի հանգչել կանոնադրեն օրէնք :

Որտէ՛ ի որագէտ հնազանդ է հօր, որտէ՛ անհնազանդ 'ի  
խորոստ է դէցէ :

Որտէ՛ ի մասարուն ուրտի տանէ զժայր, որտէ՛ անձի  
արարտութեան է հօր :

Սո՛րոյնէր է այս գիծ (,) և դնի ուր չև է լրացեալ  
իմաստ բանին, և 'ի լրումն յետագայ խօսիցն պէտս  
ունի :

Սո՛ւլ, Լ՛ուալեարց, եւ այլն, որս այժմ չեն ինչ այն-  
չափ 'ի պէտս : Լ՛ուալեարցն եւելն որ է նշան ինչ այն-  
պէսն (') արկանի 'ի իր ուր իմա իցեն յապատել զձե  
'ի յայնաւորացն որս թիւանց հանդէպին. օրինակ իմն,  
Լ՛ուլ՝ ելել, փնխանակ ասելոյ, ապա ելել, որ յապատ-  
եալ է 'ի պարճաւս յաջորդ յայնաւոր գրոյն : Տէս  
եւ 'ի յերականութեան էջ, 44 :



Ած զնայ յերուսաղէմ, և խացոյց 'ի վերայ աշտարակի  
 աստարին, և ասէլ ցնա. ելի որդի էս աստուծոյ,  
 որի զշէզ աստի 'ի վայր:

Իսկն սյսպիտի ինչ նշան է (՝) և կիրառութիւն  
 նորա բազում յոյժ:

'Ասի' յորժամ այլ մասն բանի ընդ մէջ անկա-  
 նիցի բային և նորա խնդրոյն, որպէս,

Ահնային' որ խնդրել 'ի շէն աստ: Աստ ասնային  
 խնդիր է բային տալ, և որ խնդրել 'ի շէն, է հա-  
 տուած անկեալ ընդ մէջ երկոցունց:

Արկրորդ փոխան ստորակիտի վարի յորժամ եր-  
 կու զիմաւոր բայք կարի հուպ իցեն իրերաց:

է) որ ասն հասնիցէն' անդ ագջի:

Տեսանելով ասնային' և յի ասնային, և լեւով լեւիցին'  
 յի իմացին:

Արրորդ երբեմն 'ի սկզբնաւորական շաղկապս, զայս  
 օրինակ, Արտ' Ա- արտ' Իսի արտ' և այլն: 'Արյնպէս  
 և կոչական հոլովն զի միայնակ կայ 'ի բանին, բութ  
 առնու զինքեամբ:

Տրոհութեան է ուսուցանել եթէ զիւրդ և որպէս  
 պարտ իցէ զբառս անջատել, զի մի բաժանումն կամ  
 գրադարձն լինի սխալ:

Արդ այնպէս անջատելի են բառք, որպէս և ար-  
 տարերին: 'Ամին իրի զոր օրինակ չասեմք երբեք 'ի  
 խօսս Բար-է, Գան-աի, Գիտ-ալ-էն. այլ Բար-է, Գա-  
 նաի, Գի-տա-լէն սյսպէս ևս բաժանեցես 'ի գրելդ:

Այն սյսորիկ եթէ միոյ ինչ բառի մի միայն բա-  
 ղաձայն կայցէ 'ի մէջ երկու ձայնաւորաց, զբաղաձայնն  
 'ի յաջորդ ձայնաւորն յարեսջիր. որպէս սիւրդ' սի-րդ,  
 պարի' պարի:

Արտուղին 'ի կանոնէս բաղադրեալ մասնիկքն, զի  
 բաղաձայն նոցա թէև 'ի մէջ երկուց ձայնաւորաց իցէ,  
 տակաւին անանջատելի է, յոյր սակս չմարթի բնա-  
 բաժանել ա-նարժան, ա-նարգ, այլ ան-արժան, ան-  
 արգ:

Ասկայն եթէ միոյ բառի կրկին կամ երեքկին բա-



ղաձայնք գուցեն, զմին ևեթ զնել պարտ է 'ի յետագայ ձայնաւորն : որպէս, եղբայր՝ եղ-բայր, Լարգման՝ Լարգ-ման, Խննին՝ Խն-նին :

Ըպա եթէ իցեն երկու ձայնաւորք կից իրերաց, այսպէս զատանելի են, գոր-ձե-ին, Սն-րէ-ամ :

Իսկ երկրարբառ ձայնաւորքն աւ, էւ, ու, ուտ, և ուէ, անբաժանելի են 'ի միմեանց, ուստի ոչ հատանի ու-տ-ի-քիս, համ-բա-տ-ել, սպեղծ-ուած, 'ի բարչ-ուէ : Թէպէտ են որ այսպէս ևս բաժանեն կարծեալ այնպէս 'ի միտսն եթէ գիրն ՚ի-ն մերթ ձայնաւոր և մերթ բաղաձայն իրրև զվէ՛լ հնչիցէ : Սակայն զկարծիսդ փոքր մի յառաջ լուծաք, վասն որոյ լաւ ևս է բաժանել այսպէս, աւ-տ-ի-քիս, համ-բա-տ-ել, սպեղ-ծուած, 'ի բար-չուէ :

Ինչպէս ձայնն յ եթէ հանդիպիցի յաւարտ բառի ոչ հնչէ. որպէս, ծառայ, արայ. և այլն : Իսկ եթէ 'ի սկիզբն բառին կայցէ, տայ ինչ հնչումն մեղմ. զոր օրինակ, յախճէ, յարուելան : Հաղագս որոյ եթէ բաղաձայնն յ իցէ 'ի մեջ երկուց ձայնաւորաց, ոչ յարի 'ի ձայնաւորն որ զկնի գայ, այլ յառաջինն . այսպէս, արայ-ուելան, ծառայ-ախան :

Վիտելի է և այս, զի 'ի տողագարծի ուր գիրն ը զօրութեամբ հնչէ, ներգործութեամբ զնելի է 'ի գրագարծի այսպէս, զնո՛ւր-նո, դնել՝ դը-նել :

### Ս՚նացելու նշանագիւրք :

Են և այլ նշանագիրք ինչ հնարեալք, որոց անուանք այսօրիկ են, մակուկ, Էնլամնայ, փակագիծ, պոպիւ, պոպուագիւր, Էրիւրեւի, և այլն :

Ս՚նակուկ այս նշան է ( ' ) և զնի յետուստ ինի գըրոյն, յորժամ նախդիր իցէ այն . այսպէս, 'ի . աւ 'ի, և այլն :

Էնլամնայ այսպիսի ինչ նշան է ( - ) և զնի 'ի տողագարծի առ 'ի ցոյց, եթէ բառն կիսատ է :

Փակագիծ որ է այս երկու կիսաբոլոր գիծս ( ) վա-

րի 'ի բանին յորոշումն օտար ինչ բանից, զոր 'ի ներքս  
ածեմք իրրև պարզութիւն առաջնոյ սասցուածի. որպէս,  
Լնդէր ոչ իւրէ առնել 'ի Տը Էրիէ-դն ասարձոյ  
զայն (որպէս ասաց ռն 'ի սրբոցն) զսր իւրօլ է  
առնել ահ ծոշնն իմ շան:

Պարտէ է գիծս (՝) և դնի 'ի վերայ բառից, որոց  
կամ առաջին և վերջին գիրն միայն գրի. այսպէս, Թձ'  
ասարձո, Թյ' ասարձոյ, Թս' արխարո, Ես' յխոսս, Թր'  
որէր, և այլն. և կամ ոմանք 'ի գրոցն՝ այսպիսի են,  
Սի' լուսն, Թի' նոցա, Թի' նորա, Թի' նոբա, Թի' առ-  
նայնի, Էդ' Էրասապէ, Բարո-Էի' Բարո-Էիան:

Լայց զի ծանր է այդ ընթերցողաց, լաւ ևս է ար-  
ձակ գրել, որպէս և մեք իսկ եթէ 'ի քերականութեանս  
և եթէ յայլ գիրս ոչ արկաք 'ի գործ զպարտան:

Պարտադէր ասի այն նշանագիր, զոր փոխանակ  
ամբողջ բառի միոջ դնեմք, կամ 'ի միոյ ինչ գրոյ բա-  
ռին և կամ այլով իւրիք զայն ձևացուցեալ. այսպիսի  
են, Թ' այսինքն. ը' ընդ. ը' ըստ. Կ' կամ. ք' քան.  
և այլն: Սակայն այժմ խափանեալ է կիրառութիւն  
այսպիսեաց:

Երկուս է զյոգ գիծս (") և դնի 'ի վերայ բառի  
ուր 'ի բաց թողեալ իցէ գիր ինչ ձայնաւոր, կամ բա-  
ռն կրճատեալ իցէ. զոր օրինակ, ք' զք' քաղաք,  
Յովհ' . Ոսկեր' . Ղուկ' . Լեւտ' . այսինքն, Յով-  
հաննէս Ոսկերբան . Ղուկաս Լեւտարանի:

# Յ Լ Ի Ե Լ Ո Ւ Լ Ծ

## Երկրորդ Մասին



Օգնագան զրոյցք 'ի խրատ և 'ի զբօսանս աշակերտաց :

Ե .

Յաղագս աստուծոյ :

Սարգսողէր . Եշմիւրր :

Սարգսողէր . Օգնէ կարծես որդեակ՝ յորժամ շուրջ հայեցեալ տեսանես զմարգագետինս ծաղկօք զարդարեալս , զծառս պտղօք լցեալս , և զդաշտս արմտեօք առատացեալս : Յորժամ տեսանես զձկունս 'ի ջուրս . և զթռչունս յօդդ : Սարծիցես զայս ամենայն ըստ դիպաց եղեալ :

Եշմիւրր . Յետին անմտութիւն է յայդպիսի անաստուած խորհուրդս մտարերել :

Ս . Եպա ուլ որ գոյացոյց զերկինս և զերկիր , և որբան ինչ միանգամ 'ի նոսա արարածք իցեն :

Ե . Եստուած , որ միայն կարէ յոչ էից 'ի գոյածել զարարածս :

Ս . Երդարև յիրաւի աստուծոյ արարածք են երկինք , աստեղք , արեգակն , և լուսին : Երկիր , հուր , ջուր և օդ . մարդիկ և անասունք . ձկունք և թռչունք , երկակենցաղք , որդունք և ճճիք բազմոտանիք : Ըոյսք , ծառք , պտուղք և արմտիք : Օտուլ և լիճք , լերինք և ձորք , վէմք և մետաղք : Եյլ արդ անէ ասս ինձ գիտես համբուն՝ թէ է աստուած :

Ե . Եյո՛ յանհամար գործոց նորա հաւաստի գիտեմ՝ թէ է աստուած :

## Ի :

Ս . Ո՞վ ստեղծ զքեզ :

Ը . Ըստուած , որ ետ ինձ զհոգի և զմարմին , զկերակուր զըմպելի և զհանդերձ , և պահէ զիս ողջ մարմնով , և այլովք ևս բիւրապատիկ երախտեօք ճոխացուցանէ :

Ս . Սի՞ծէ պատուականագոյնն ևս դու քան զանբան կենդանիս :

Ը . Ըյո՞ , զի մարդ եմ , և գոյ յիս հոգի բանական , յորմէ վրէպ են ամենայն ազգք կենդանեաց :

Ս . Ձիցէ՞ արժան մեծապէս գոհանալ զաստուծոյ մերոյ զհօրէն գթութեանց , որ սյսպիսի անզուգական պատուով պատուեաց զմեզ :

Ը . Ըրգարեւ որ ոչ լիաբերան գոհանայ զաստուծոյ , անարժան է զարեւ տեսանելոյ , և անարժան է կենաց :

## Գ :

Ս . Ո՞ւր է աստուած բարեխնամ տեսուչ մեր :

Ը . Ըստուած մերձ է առ ամենեսեան , որպէս և առաքեալն վկայէ , [Թէ ոչ հեռի էս] է յիւրաբանչեւ ունի է ի մեզ : Ձիք տեղի խաւարին՝ աներևոյթ յաչաց նորա : Եւ ոչինչ կարէ թագչիլ ՚ի նմանէ , ոչ բան , ոչ խորհուրդ , և ոչինչ ՚ի ծածկելոցն ՚ի սրտի :

Ս . Օգոյ՞ լեր որդեակ՝ ոչինչ գործել կամ խորհիլ յորոց օրէնքն աստուծոյ հրաժարեցուցանեն զմեզ : Օ՞ի թէպէտ և կարես խաբել զմարդիկ , այլ զաստուած ոչ բնաւ : Ըյլ յորժամ բարիս գործես , ուրախ լեր , զի վկայ ունիս քեզ զամենատես ակն , որ հաստուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր :

## Դ :

Ս . Կարե՞ս տեսանել զաստուած զգալի աչօք :

Ը . Ոչ բնաւ , զի անմարմին է , և որոյ ոչ է մարմին , աներևոյթ է աչաց , այլ մտաց իմանալի է :



Ս . Ո՛չ ապաքէն և 'ի քեզ իսկ կրի բնութիւն իմն որ ոչ անկանիցի ընդ տեսլեամբ ական :

Ը . Ը՛յո՛, հոգին, որ է պատճառ կենդանութեան մարմնոյ :

Ս . Որքան է զօրութիւն աստուծոյ :

Ը . Ը՛ստուծոյ զօրութեան չիք սահման : Ը՛մենայնի կարող է, և չիք ինչ անհնարին առ 'ի յաստուծոյ :  
Ս ասն որոյ տէր ամենակալ է անուն նորա :

Ս . Ը՛պա զգոյշ լեր, զի մի արտաքոյ օրինաց նորա գործելով անհաճոյ լիցիս յաչս նորա : Այլ ո՞վ ոք յարարածոց կարէ ապրեցուցանել զքեզ 'ի ձեռաց նորա : Օջրացիր 'ի հրամանս աստուածայինս, և առաւել յաստուծոյ երկիցես քան 'ի մարդկանէ :

Ը . Օ՛ի է ինձ երկնչիլ, եթէ աստուած ամենակալ ընդ իս է : Շ՛շմարիտ է բան առաքելոյն, որ ասէ .  
ԼԵ՛Է աստուած 'է ԲԵ՛ Ի՞՞՞՞ է, «Վ էցէ ԲԵ՛ Կոկոռո՛ւ :  
Ս ասն որոյ սյր քաջայոյս յաստուած, խաղաղ և անզորք սրաի վիճակի :

## Ե :

Ս . Օ՛իարդ կարես գիտել, եթէ բարերար է աստուած :

Ը . 'Ի բազմապատիկ երախտեաց նորա, յորս օր ըստ օրէ վայելեմք անբաւ առատութեամբ, մինչև անաստուած մտաց է յայսպիսի և յայսչափ երախտեաց միջի յերկբայս անկանիլ զբարերարութենէն աստուծոյ :

Ս . Ը՛պա աստուած խնամէ՞ զմարդիկ :

Ը . Ը՛յո՛, աստուած նախախնամող զօրութեամբ վարէ ոչ միայն զմարդիկ, այլև զանասունս, և զանչունչ տարերս : Օ՛այստօսիկ արարածք իւրեանց գեղեցիկ կարգաւորութեամբ իբրև խօսուն բերանով զարարէն պատմեն :

Ս . Ո՞վ ոք յէիցս ծայրագունին արժանաւոր է սիրոյ :

Ը . Ս՛իայն աստուած, զոր պարտիմք ոգւով չափ սիրել, 'ի վեր քան զձնողս և զամենայն սիրելիս, վասն ազգի ազգի խնամոց նորա առ մեզ :



Ս . Լ՛րդարե ոչ բաւեմք սիրել զնա և պատուել արժանի պատուով :

Օ :

Ս . Սիժէ ամենեքեան հաճոյ են աստուծոյ :

Լ . Սէ, աստուածասէրք՝ որք աստուծոյ իբրև հօր հնազանդին, սիրելի են նմա : Իսկ չարասէրքն, որք ապրտամբ են հրամանաց նորա, և անպատկառ յօրինաց ՚ի ներքս ՚ի մեզ բնաւորելոց, առելի են յաչս նորա . զի աստուած սուրբ է, և ատէ զամենայն անօրէնութիւն :

Ս . Լ՛թէ աստուած արդար է . ապա դատի զմեզաւորս : Լ, և զի՞նչ պատուհաս սահմանեաց վասն մեղաւորաց :

Լ . Կայ մնայ մեղաւորաց արդար դատաստան և դառն պատուհաս յաւիտենից, զոր ունին լուծանել ՚ի կեանս որ յետ մահու :

Ս . Լ՛պա զգոյշ լեր մի ինչ գործել անհաճոյ աստուծոյ, զի վերջին սահման չարեաց է անկանիլ ՚ի ձեռս բարկութեան ամենակալ դատաւորին :

Լ :

Ս . Օ՛ի՞նչ խոստացաւ աստուած արդարոց :

Լ . Օ՛անանց երանութիւն ՚ի փառս արքայութեան երկնից :

Ս . Շ՛մարտիւ այդ սյդպէս է :

Լ . Լ՛յժ, զի աստուած խոստացաւ անսուտ բերանովն, և հաստատեալ է ՚ի հոգիս առաքիներաց, թէ վրիպէ ՚ի խոստմանցն և ոչինչ, այլ ամենայն անվրէպ ՚ի գլուխ ելանէ :

Ս . Ո՛վ զարթոյց զմեզ յաւետիս խոստմանցս այսոցիկ :

Լ . Յիսուս քրիստոս, որ գրեթէ հազար ութհարիւր երեսուն և եօթն ամօք յառաջ եկաց ՚ի հրէաստանի, և իւրով վարդապետելով և մահուամբ զյոյս յարութեան և արդար հատուցման մեզ հաւատարմացոյց :

Ս . Գ՛ոհացիր զպարգևացս, և զամենայն աւուրս

կենաց քոց կատարեալ զկամն նորա, որպէս զի մասին սրբոց՝ որ պատրաստեալ է պատուիրանապահ համբերողաց, արժանի լիցիս :

Ը :

## Յաղագս յառնելոյ 'ի քնոյ :

Պէտքոս . Պօղոս :

Պէտքոս . Օտրթիր, պօղէ զարթիր, ընդէք ննջես . ժամ է արդ 'ի քնոյ զարթնուլ :

Պօղոս . Գնա՛, եղբայր, գնա՛, մի աշխատ առներ զիս, զի տակաւին չե է իմ բաւական 'ի քուն եղեալ :

Պէ . Գիշերն էանց, և առաւօտն ծագեցաւ, ժամ է արդ երթալոյ 'ի դպրոցն :

Պօ . Թոյլ արա ինձ սակաւիկ մի զի յերեկոյին կարի վաստակեալ մտի 'ի քուն :

Պէ . Ոչ թողից զքեզ մինչև ոչ ելանիցես յանկողնոյ : Ոչ գիտես թէ զիարդ իմաստունն յանդիմանական վարի բանիւ առ ծոյլան, թէ որպէս դուք շէն 'ի ծինող, այնպէս վար 'ի իմե՛ծս իւր :

Պօ . Օ՛ր եղև քեզ այսօր, զի այսպէս վաղ քաջ 'ի հաւախօսի եկեալ՝ չտաս ինձ թոյլ առ վայր մի հանգչել յաշխատութենէս :

Պէ . Օ՛րնչ ասես, արդէն իսկ էանց պահ մի առաւօտուն :

Պօ . Վճանի՞ ժամք են աւուր :

Պէ . Երեք, և գրեթէ ուսայ 'ի բերան զհամարն իմ :

Պօ . Այ՛ ինձ զի հեղգութեամբ ծախեցի զժամանակն : Յարեայց վաղվաղակի, ներեալ սակաւիկ մի մինչև պատրաստ լինիցիմ :

Թ :

Ըստաւանդապետ . Խոսքով :

Ըստաւանդապետ . Եթբ զարթեար այսօր 'ի քնոյ :

Խոսքով . 'Ի մետասաներորդ ժամու զիշերոյ :

Լ. Օ՛հնչ գործ գործեցեր՝ իրրև յարեար ՚ի քնոյ,  
 Խ. Նախ առաջին գոհացայ զաստուծոյ, որ ետ  
 ինձ զգիշերս խաղաղութեամբ անցուցանել:

Լ. Ըրդարև մեք բանաւորքս պարտիմք անպակաս  
 գոհութիւնս առ աստուած մատուցանել, վասն անբաւ  
 երախտեաց նորա առ մեզ: Օ՛հնչ յետ այնորիկ:

Խ. Ըրկի զինև զհանդերձս՝ լուացի զձեռս և զե-  
 րեսս իմ, և ապա սկսայ ուսանիլ ըստ հանապազորդ  
 կարգի:

Լ. Բարւոք է, ջանս այսպէս օր ըստ օրէ յառա-  
 ջադէմ լինել:

Ժ:

### Յաղագս ընթերցման:

Սուրբ . . . թարգման:

Սուրբ . . . Եղբայր՝ զե՛նչ է այն զոր ՚ի ձեռին ունիս:

Թարգման . . . Բերականութիւն որպէս և տեսանես:

Ս. Գիտես ՚ի բերան զհամարն:

Թ. Գեռևս ուսայ, և այժմ պատրաստիմ երկ-  
 րորդել զմիւսանգամ ուսեալն. զի հաստատուն լիցի և  
 մի հարևանցի ինչ:

Ս. Բնդէր հանապազօր կրկին ուսանիմք, զոր յե-  
 րեկն արդէն ուսաք:

Թ. Ըյնպէս հրամայեաց վարդապետն:

Ս. Լուայ զպատուէրն, այլ զպատճառն հարցա-  
 նեմ, թէ բնդէր այնպէս հրամայեաց:

Թ. Ըստ ՚ի սերտել ՚ի միտս զնորոգ ուսեալն:  
 Եթէ որ ոչ ոռոգէ օր ըստ օրէ զնորատունկ բոյս՝ վաղ-  
 վաղակի ցամաքի. նոյնպէս և որ զմիանգամ ուսեալն թո-  
 ղու անյիշատակ, դիւրաւ մոռանայ:

Ս. Ըղաչեմ զքեզ, պատմեալ ինձ եղբայրաբար  
 սիրով, թէ զհարդ ուսանիս զի տեսանեմ զքեզ զբաղ-  
 մօք աշակերտակցօք իմովք յոյժ գերազանցեալ:

Թ. Ըհա պատմեմ քեզ զամենայն յանկեղծ մը-  
 տաց: Օ՛հ ոչ շատնամ միանգամ ուսանելով, սյլ

երկիցս և երկիցս փորձեմ զնոյն, զի 'ի խոր տնկեսցի 'ի միտս իմ:

Ս. Յանկամ հարցափորձիւ քննել զքեզ, և տեղեկանալ վասն աւուրս ընթերցուածոյ:

Թ. Լա ինձ կարի ախորժելի է. այլ դու քաջ միտ դիր, զի եթէ անկանիցի բառ կամ բան 'ի բերանոյ իմ մէ՛ յիշեցուցես անթերի:

ԺԼ:

**Յաղագս հնազանդութեան առ ծնողս:**

Ս ջլեանէս. Լ. բէսպովէս:

Ս ջլեանէս. Հայր քո, որպէս լուայ, դարձաւ յԱգիպտոսէ:

Լ. բէսպովէս. Լ. յո՞ դարձաւ, յաւուր ուրբաթու յերեկոյի:

Ս. Լ. պաքէն ծանր է քեզ գալուստ նորա:

Լ. Բնդէր, մանաւանդ թէ կարի ուրախ եմ ընդ գալուստ նորա: Բայց զի՞ է քեզ, զի յայդպիսի միտս բերիս:

Ս. Թերևս 'ի լննել նորա 'ի բացէ կարէիր ըստ մտի շրջիլ:

Լ. Ոչ գիտեմ զինչ ակնարկէ ըստ մտի շրջելն: Լա 'ի մի և 'ի նոյն շաղաց վերայ հետևիմ եթէ հեռի իցէ հայր իմ և եթէ մերձ: Խաղամ, եթէ դէպք ժամանակին այնպէս պահանջեն: Ոչ բնաւ մեկնիմ 'ի տանէ, բայց եթէ վասն կարևոր պիտոյից հրամանաւ մօր իմոյ:

Ս. Եսև մօր քո այնչափ հնազանդ բարս ցուցանես:

Լ. Ոչինչ խտրեմ ընդ հայր և ընդ մայր: Ոչ պաքէն միապէս օրինադրեն տասնաբանեսայ պատգամքն զհօրն և զմօրն պատիւ, թէ պարտուի զհայր քո և զմայր:

Ս. Լ. դարև զամենայն զոր ասացեր, արդար խօսեցար:



Ե. Բնդէր այդչափ հակառակեցար յայն ինչ, զորոյ ինքնին գիտէիր զճշմարտութիւնն :

Ա. Եւ 'ի ճանաչել զանշարժութիւն մտաց քոց 'ի բարին :

ԺԻ :

Յաղագս ցրտութեան ձմերայնոյն :

Գրե՛գր . 'Ներե՛ն :

Գրե՛գր . Տես, քանի բռնութիւն է օդոյ, որպէս սաստկութեամբ շնչէ հիւսիս : Ոչ ապտքէն լաւ ևս էր ամենայն սառնամանեաց և դառնաշունչ օդոց անբաւ հեռաւորութեամբ մեկնիլ 'ի սահմանաց մերոց :

'Ներե՛ն . Ոչ այդպէս, զի 'ի բազում իրս պիտանի է ձմեռն և սառնամանիք ցրտութեան :

Գ. Յինչ իրս անէ ասա :

'Ն . Բռնութիւն հողմոյ ուժգին բաղխելոյ մաքրէ զօդն 'ի վնասակարութենէ, զի եթէ օդ անշարժ կայր 'ի կայանի, անթիւ մահունս գործէր ապականարար գոլորշեօք :

Գ. Եւ զի՞նչ օգուտ մատակարարէ ձմեռն անբերելի սառնամանեօք :

'Ն . Բոյսք և ամենայն ծառատունկք և երկիր ամենայն եթէ ոչ առցեն զձմեռն և զանձրև ոչ կարեն քաջ պտղաբերել : Օ ի եթէ ձիւն և սառնամանիք ոչ պընդէին զլերինս, արմատք խոտոց ոչ պարարէին :

Գ. Աւ ընդէր է, զի 'ի ձմերայնի երկիր պնդի, և ջուրք պաղին սառնամանեօք :

'Ն . Եւ յն է պատճառն, զի 'ի ձմերայնի ճառագայթք արեգական կողմնակի անկանին յայն մասն երկրի, ուր ձմեռն զօրացեալ իցէ : Աւ կողմնակի անկեալ ճառագայթք տկար են ջեռուցանել : Եւստի է և անզուժութիւն տունջեան և գիշերոյ, զի 'ի ձմերայնի կարծին աւուրք և յամերայնի երկարին :



ԺԳ .

### Յաղագս ճաշու :

Սեփյեղ . Գաբրիէլ :

Սեփյեղ . Խնդիր մի փոքր խնդրեմ 'ի քէն , աղաչեմ մի անտես առներ :

Գաբրիէլ . Եւ ես աղաչեմ զքեզ մեկն և յայտնի ասել զամենայն , զի անխափան կատարեմ :

Յ . Խնդրեմ 'ի քէն այսօր 'ի միասին ճաշել :

Գ . Բարեոք է . այլ զգոյշ լեր մի խնչ առաւել քան զայլ աւուրցն սովորութիւն պատրաստել :

Ս . Գու ինքնին գիտես , թէ որպէս 'ի մանկութեանէ անտի իմմէ վարժեցայ 'ի ծնողաց իմոց պարկեշտ լինել 'ի կերակուրս և յըմպելիս :

Գ . Վանի՞ ժամք են աւուր :

Ս . Երեք : Սերձ է ժամ ճաշուն , եկ երթիցուք 'ի տուն :

Գ . Իմ այնպէս լուեալ է , զի արեմուտք այլադգ վարի 'ի թիւս ժամուց :

Ս . Ե՛րբ այնպէս է . զի առ նոսա հասարակօր և հասարակ գիշեր միշտ յերկոտասաներորդ ժամու լինի : Իսկ առ մեզ ժամք հասարակ աւուր և հասարակ գիշերոյ միշտ փոփոխին :

ԺԵ .

### Ժամ ճաշոյ :

Սեփյեղ . Գաբրիէլ . Եղբայր նորս Սափյեղ . և ծուռայ Դ Պէպրոս անուն :

Գ . Ինդէր անցեր զբանիւ քով , և ետուր յօրինել խորտիկս զանաղանս և բազմապատիկս . միթէ գա՛յլ կարծիցես զիս եղբայր :

Ս . Վա՛ւ լիցի . սակայն և ոչ անարիւն ճպուռն , որք առանց կերակրոյ զօդն միայն ծաւքելով , կամ 'ի ցօղոյ երկնից կերակրին :

Գ . Ո՛ւր է եղբայր քո կրտսեր Սափայէլ :

Մ. Ըստ առ մեզ է, այլ քանզի կարի փոյթ է յուսմունս, հրաժարեալ է 'ի մարմնական զբաղմանց :

Գ. Պետրոս, գնա անդ արա նմա զեկաւորութիւն իմ և թէ ժամ է ճաշոյ :

Ուսուցիչ. Ողջոյն իցէ :

Մ. և Գ. Ողջոյն է. եկ առ մեզ բազմեսցուք :

Ու. Երեցէք ինձ, զի ոչ իմացայ զգալուստ ձեր, և ոչ հանդիպեցայ ձեզ ըստ արժանի ընդունելութեան որջունի սիրոյ :

Գ. Կանխաւ գիտեմք մեք, թէ շրպիսի սերտիւ սիրեմք զմիմեանս, և վասն ակամայ տգիտութեան ոչ որ մեղադիր լինի սիրելոյ :

Մ. Ըրդ՝ քանզի ամենայն ինչ պատրաստ է՝ աշօթս արարեալ բազմեսցուք 'ի սեղան :

Ու. Օխարդ է ապուրն :

Գ. Յոյժ բարւոք է, և ինձ կարի ախորժելի :

Մ. Պետրոս, առեալ զսկաւառակս՝ բեր այլ փոխանակ նորա :

### ԺԼ:

Մ. Ըրդ՝ բաժանեցի զմիս որթուն, զոր մասն առաւել ախորժես :

Գ. Որն և իցէ, ինձ մի և նոյն է :

Մ. Ըռջիք զայս մասն, զի փափուկ է և համեղ :

Գ. Սեծապէս ցաւ է մեզ, զի զանձնէ քեզ ոչինչ փոյթ է : Ես ինքնին մասնաւորեցից քեզ զմիւս մասն :

Մ. Ես 'ի սեղանի չհրաժարիմ 'ի կերակրոց :

Ու. Ըսլ զի է քեզ զի զերեսս քո ոչ տեսանեմ զուարթագին, որպէս յերեկն և յեռանդն : Գործ զկրիստոսին գործես :

Գ. Ըռազք բացեր զբերան քո : Ըսլ չգիտեմ ես, յինչ ակնարկէ առակս :

Ու. Պատմեն զկրիստոսի փիլիսոփայէ, թէ այնպէս զմայլէր մտօքն յուսմունս իւր, մինչև առ սեղանով բազմեալ սովամահ լինէր, եթէ ծառայ նորա ոչ տանէր զկերակուրն 'ի բերան նորա :

Վ. Ինձ այնպէս թուի, թէ որպէս ոչ ուրեք այսպէս բարեկամաբար հիւրընկալեալ մեծարեցայ, նոյնպէս ոչ երբեք այսչափ կերայ, որչափ այսօր: Յիմ վերայ արդարանալ կարծեմ զառասպելն թէ « շարայն որդիքն է, թէ շէր շէրայն ամբարշն շէն »:

Ս. Ըղաչեմ զձեզ պատմեցէք ինձ զինչ խրատե առակս:

Վ. Պատճառս ետու քեզ քննել զպատմութիւն Սոփեսի խորենացւոյն. բայց զառաջին հատորին զմետասաներորդ պրակն, և անտի տեղեկանաս<sup>1)</sup>:

### Ժ.Օ:

Ս. Որն յերկուց աստի հաճոյ թուի քեզ միս եզին, եթէ ոչխարին:

Վ. Սիս եզին առաւել ախորժելի է ինձ. այլ զոչխարինն առաւել առողջաբար ասնն:

Ս. Ըսպէս և ես զխոզնին յոյժ սիրեմ, այլ քնասակար պատմի առողջութեան:

Ս. Տիրաւի է զարմանալ, թէ ուստի 'ի քիմն մարդկան այսչափ զանազանութիւն: Հազիւ գտանին յաշխարհի երկուք ոմանք, որք միաբանիցին 'ի ճաշակս կերակրոց:

Ս. Վիտեմ զբազումս, որք և զպանրոյ հոտն առնուլ անգամ ոչ հանդուրժեն:

Վ. Սանաւանդ տեսի ես զոմանս, որք բնաւ հաց և ջուր ոչ ճաշակեն:

Ս. Ըլ յերկարել մեր զբանս մոռացաք զուտելն:

Վ. Շնորհակալ եմ եղբայր, այնպէս յագեցայ, զի այլ ոչինչ կարեմ ուտել:

<sup>1)</sup> Վեհա աստիկս աս շարայնիքն հային, որ աս յամանս-  
 10x հոյնէսի խորենացոյն յաճախեալ էր 'ի Բերանս  
 Գեղեցայ, և ի արամայնս զորդի եւր զարայ զայր շարայ-  
 նիւր և զյուզաթին աստիւ 'ի գաշաթի արգասանդ և  
 Բերբի, յագեցոյցանել զանյագո-  
 լի-ն նորա 'ի պա-  
 բարսո-  
 լի-ն էրիբն: Խոր. 12:

ԺԼ:

## Յաղագս զբօսանաց :

Հայր . Որտէ :

Հայր . Այս ահաւաստիկ ելանեմ զբօսանիլ , գան և գու ընդ իս որդեակ :

Որտէ . Ահաւաստիկ եմ հայր , երթիցուք վաղվազակի :

Հ . Աւաստիկ անցար պահ մի , և երևի մեզ ծով :

Ո . Ո՛վ թէ քանի ահագին և լայնածաւալ է ծով . միթէ ունի՞մք անցանել ընդ այս ծով :

Հ . Այո , եկ առ իս , և կալեալ զձեռանէ քումմէ այնպէս մտցուք 'ի նաւակն մի գուցէ անկանիցիս 'ի ծով անդր :

Ո . Սիթէ խո՞ր է ջուրն :

Հ . Յոյժ խոր է :

Ո . Տեսանեմ ես հայր զբազմութիւն նաւաց մեծաւ մեծաց և փոքունց : Ուստի՞ գան , կամ ուր երթան :

Հ . Սեծամեծ նաւքն՝ զոր տեսանես , յածին ընդ աշխարհ ամենայն , զի ծով է շուրջ զաշխարհաւ . վաճառս բերեն և տանին : Իսկ փոքրիկ նաւակք այսոր անդր շրջեցուցանեն զմեզ առ 'ի զբօսանս :

Ո . Տեսանես հայր զբազմութիւն նաւակաց , որք գան այսր լի մեծամեծ ձկամբք : Աւ զի՞նչ է սյն որ 'ի խելս նախն :

Հ . Արքա ձկնորս ասին , և գործի նոցա ուռկան է :

Ո . Օխարդ կարեն ուռկանաւ ձկունս որսալ :

Հ . Արկանեն զուռկանս 'ի ծով , և 'ի չորից տըտնոց ձգեն 'ի ցամաք բազում աշխատանօք , և որ ինչ 'ի ներքս փակի , զայն ըմբռնեն և վաճառեն :

Ո . Ազաչեմ զքեզ հայր պատուական , զի կալեալ զձեռանէ իմմէ , հանցես 'ի ցամաք , մի գուցէ անկանիցիմ 'ի ծով :

Հ . Բարւոք է , ոչ թողից զքեզ անկանիլ :



Օրուարձալի տեսիլ կազմութեան աշխարհի :

Ե :

Տէնդէր :

Բնդհանուր աշխարհս յերկուս մասունս բաժանի յերկնս և յերկիր : Յերկնս տեսանեմք զարեգակն և զլուսն և զաստղեր : Երկիր ընդ այլոց տարերաց , այսինքն , հողոյ , ջրոյ , և օդոյ . 'ի պատճառս մարդոյ ստեղծաւ : 'Ի յերկրի գտանին լէրիւնք անտառովք և խոտովք . քարամբք և մետաղօք . յոք ծաղկամբք և սիզովք . դաշտք ագարակօք և արմտօք , պարտիզօք և բանջարօք . ծով , լէճք , գետք և առուք , ինքանիք և ճարտիկ : Եւրոպայ վերանան յօգս , լուսնս թուչին 'ի ներքոյ երկնից . շրջադարձի գնան կամ ընթանան . սողունք սողան 'ի վերայ երկրի : Սարգիս ժառանգեն զբնաւ տիեզերս :

Բ :

Երեգակն :

Երեգակն , որոյ մեծութիւն 'ի վեր է քան զմիտս , է գունտ մի հրեղէն , 'ի ծագել իւրում զխաւար գիշերին փարատէ , և լուսաւորէ զամենայն ինչ ճառագայթութիւքն իւրովք : Սինչև ծագեալ իցէ՝ նախընթաց իւր սուտքէ զարշալոյսն և զաստղօքն , և յորժամ մտանէ՝ զհետ իւր գայ երեկոյ և գիշեր : Սոյն այս արեգակն նուազէ և մերժէ զցուրտն , ջեռուցանէ զաշխարհս ամենայն , և տայ ամենայնի սնունդ և աճումն : Եւրոպայ աղբիւր է լուսոյ և զբնաւիւնն :

Գ :

Երեգակն է զի հեռանայ , և է զի մերձենայ , որով չափին չորք եղանակք տարւոյն , գարուն , աշուն , յիւն , և շուն : Արչափ կողմնակի անկանին ճառագայթք արեգական , այնչափ սակաւ է զօրութիւն նոցա առ 'ի ջերմութիւն : Այսն այնորիկ հասարակաւուր ճառագայթ



արեգական զօրաւորագոյն է քան զսուրբաւորուն և զերկ-  
կոյին : Յորժամ լուսինն զուգակշիռ դէպ արեգականն  
պատահիցէ, յայնժամ խաւարի արեգակն, և այս պա-  
տահէ միայն 'ի ծնանել լուսնի :

Դ :

Լուսին :

Լուսին իբրև զաշխարհս ընդդիմահար մարմին է, որ  
զլոյս իւր առնու յարեգակնէ : Լուսատու է գիշերոյ, և  
'ի լուսոյ նորա աղօտանան աստեղք, այլ անմասն է 'ի  
ջերմութենէ : Արբեմն երևի և 'ի տունջեան : Յար 'ի  
փոխման կայ լուսին, է զի լրանայ, և է զի պակասի 'ի  
նմա լոյսն, և դարձեալ ընծայի նմա լոյս, և առ սակաւ  
սակաւ աճէ 'ի նմա, մինչև յառաջին պայծառութիւնն  
'ի վեր ելանէ : Լրումն լուսնոյ հանգիպի 'ի շրեքտա-  
սաներորդ աուր : յորժամ կողմն յարեգակնէ պայ-  
ծառացեալ առ մեզ ունի զհայեցուածն :

Ե :

Լուսինն գնդաձև է, սակայն ոչ հարթ հաւասար,  
այլ խորացեալ ըստ օրինակի խորոց և ըստ ձորոց, ըստ  
լեռանց և ըստ բլրոց : Արբանեակ կամ ընկեր է աշխար-  
հիս, և շուրջ գայ զսովաւ յարեմտից յարեւելս 'ի քսան  
և ինն աուրս, և 'ի մետասան ժամս, և տարեոր շրջա-  
գայութեամբ բերի զարեգակամբ : Յորժամ երկիր զու-  
գակշիռ անկանիցի ընդ մէջ արեգական և լուսնի՝ խաւա-  
րի լուսին : Այս լինի միայն 'ի լրանալ լուսնոյ : Արբեմն  
ըստ մասին և երբեմն ամբողջ խաւարի : Յիսուն միլիոն  
մղոնս հեռի է յերկրէ, և յիսնիւ չափ փոքր է քան  
զաշխարհս :

Օ :

Լուսնի գիշեր :

Լաց 'ի լուսնոյ անհամար պարբ աստեղաց զբոլոր  
գիշերն լուսաւորեն, որք բաժանին յանաւարս և 'ի յուր-

բախ : Հաստատուն կամ անմոլար աստեղք առանձին լուսով իւրեանց լուսաւորեն , և բնաւ ոչ փոխեն զտեղին , յոր կառուցան յարարէն : Ամջ աստեղաց աստղըն հիւսիսային միշտ 'ի նոյն տեղւոջ երևի : Հաստատուն աստեղք որպէս աստեղագէտք ասեն , մի մի արեգակունք են , և շուրջ զնոքօք որպէս զարեգակամբ շրջագային մոլորակք ոմանք , զորս լուսով իւրեանց լուսաւորեն և ջեռուցանեն : Օտրն այն բազմապայծառ յարդգող ձայնեալ յանհամար աստեղաց խիտ առ խիտ երևելոց ունի զտեսիլն , որ անբաւ միջոցաւ հեռի է յաշխարհէ :

Լ :

Երևի :

Գնդաձև է տիեզերս , վասն այսորիկ ասի ևս ոլորտ տիեզերաց : Յայտ է 'ի ստուերէ երկրի տպացելոյ 'ի լուսինն խաւարեալ : Եշխարհս կիսով չափ լուսաւոր է , և կիսով չափ խաւար : Լուսաւոր կիսագունտն տիւ , իսկ խաւարն գիշեր կոչի : Արես երկրի 'ի ջրոյ և 'ի հողոյ բաղկանայ , այլ փոքր է տարածութիւն ցամաքին քան գծովու : Աղերք նորա հինգ հազար և քառասուն մղոն է : Չորք են կողմանք աշխարհի , արևելք , արևմուտք , հիւսիս , հարաւ : Բաժանի 'ի հինգ գօտիս , որոց երկուքն գրեթէ անբնակ են առ սաստիկ ցրտութեան : Արկուքն բարեխառն , որպէս հայաստան և իտալիա , և այլն : Աւոր 'ի միջոցին է սաստիկ ջերմ է , որպէս ասիորիկէ և հընդկաստան : Օանազան են բերք սորա , որպէս արմտիք 'ի դաշտս . բոյսք 'ի պարտէզս . խոտք 'ի մարգագետինս , և ծառք յանտառս : Բնդ հողով գոյանան մետաղք և վէմք :

Լ :

Պ ռ ր :

Գտանին 'ի լերինս շտեմարանք ջրոյ , որք 'ի փեղկից լերանց քամեալք աղբերանան , և առ սակաւ սակաւ վտակացեալ մեծամեծ գետս գնացուցանեն : Եմենայն

ջուր բնաւոր՝ ծանրութեամբ՝ ՚ի վայր բերի, վասն այնորիկ տեղիք ուստի աղբիւրք բղխեն բարձր են քան յո զիմեն: Ջուրն ծորելի է և թափանցիկ, և կերպարանք իրաց՝ որք ՚ինա անկանին, որպէս երկինք, արեգակն և լուսին և ամպք, իբրև ՚ի հայելոջ տեսանին: Ջուր մաքուր և անխառն զուրկ է ՚ի համոյ ՚ի հոտոյ և ՚ի գունոյ: Ջուր անձրևոյ առաւել պտղաբեր գործէ զերկիր քան զգետոց և զաղբերաց:

Թ):

Դ ջուրն բնաւորեալ է ջերմութիւն, իբր զի հեղուկ է: Աւ եթէ յամենայն ջերմութենէ վերջացի՝ սառնամանիս ծնանի, որ ջերմութեամբ հալի: Այդն բնաւորական ջերմութիւն հանապազ գոլորչիս ՚ի վեր հանէ: Խառնեալ է ընդ սմա և օդ, զոր պղպջակքն յերեսս նորա յայտ առնեն: Ոմանք յաղբերաց ջուր ցուրտ բղխեցուցանեն, ոմանք ջերմ, այլք դառն, և կէսք թթու ՚ի պէտս մարդկան առողջութեան: Աղի ասի ջուրն, յոր գասնի խառնեալ հասարակաց աղ: Այսպիսի է ջուր ծովու և աղբերց ոմանց: Ջրոյ գոյացութիւն կարի պիտանի է և կարևոր: Սարդկան և անասնոց ըմպելի է ՚ի ծարաւս, զամենայն հողաբոյսս սնուցանէ և քաջուղէջ առնէ, և բազում աղօրիս և մեքենայս շրջեցուցանէ: Ատլաւ կերակուրս եփեմք, և զմերս ամենայն լուանամք և մաքրեմք:

Թ):

Ն)՝Ն):

Այնատարած ժողով ջուրցն ծով կոչի, որ զերկիրս շուրջանակի պատեալ ունի, և յառանձինն անուն ովորնս կոչի, ուստի հանապազ գոլորչիք ՚ի վեր ելանեն անբաւ առատութեամբ: Աւ կարի յիրաւունս. զի եթէ շէր սպառեալ մասն ինչ ՚ի ծովէ գոլորչիս ՚ի վեր տալով, ծով ոչ կարէր հանգարտել տանել ջուրց գետոց, որք անգաղար ՚ի ծով զիմեն: Ջուր ծովու աղի է և դառն,

որով պահի 'ի նեխութենէ : Այն այնորիկ ջուր ծովու  
 ոչ է բմպելի իբրև զջուր աղբերց և զգետոց : Այն սակս  
 առաւել ծանր է քան զջուր գետոց և աղբերաց, և 'ի  
 վերայ մկանանց իւրոց բարձեալ բերէ բեռինս ծանունս,  
 իբր զի նաք զնան անհնարին մեծութեամբ և ծանրու-  
 թեամբ : Առաւել զարմանալի է Կապուս-Լիւն և Կա-  
 շիկոս-Լիւն ծովու . զի ջուր նորա 'ի քսան և 'ի չորս  
 ժամու երկիցս աճէ և նուազի 'ի ծովափունս : Այս  
 որպէս կարծի 'ի լուսնոյ անտի ունի զպատճառն . զի ըստ  
 աճել նորա աճէ, և ըստ պակասիլն պակասի : 'Ա ծովու  
 են Ժովափունք, սարասանդք, իդլէք, ցամառիդլէք, աս-  
 րախիդլէք, և Ժուրսք :

ԺԼ :

( ) Կ :

Օ երկիր և զջուր շուրջ օդ պատէ, որ շնորհէ ամե-  
 նայն ազգի կենդանեաց զտուրեառս շնչոյ, և առանց նո-  
 րա ոչ կենդանիք կարեն կեալ և ոչ տունկք աճել : Ար-  
 չափ մերձաւորագոյն է երկրի, այնչափ թանձրագոյն  
 գոլորշեօք լցեալ է, որ մշնուլով ասի : ( ) զն ստորին  
 խտագոյն է և ծանրագոյն քան զվերինն և զհեռագոյնն  
 յերկրէ : ( ) զն լոյծ է և թափանցիկ, և 'ի վերայ ամե-  
 նայնի ունի և ոյժ առաձգական, զի թէպէտ ներէ սեղ-  
 միլ, բայց իբրև ազատանայ 'ի բռնութենէն սաստիկ յար-  
 ձակմամբ յառաջին անգայտութիւնն 'ի վեր ելանէ : Այլ-  
 տութեամբ սեղմի և խտանայ, և ջերմութեամբ անգայ-  
 տի և ծաւալի, և որչափ բարձր է այնչափ ցրտագոյն է :

ԺԻ :

( ) զն երբեմն պարզ լինի և երբեմն անձրևէ . յա-  
 մարայնի ջերմ է, և 'ի ձմերայնի ցուրտ : Իսկ 'ի գարնայ-  
 նի և յաշնայնի բարեխառն : Այլ երբէք պարզի, այլ միշտ  
 խառն է ընդ աղի և ծծմբոյ և ընդ այլ տարբերաց մա-  
 սունս : Արբան մաքուր է օդ, այնչափ առողջարար է :  
 ( ) զն թեթևագոյն 'ի վեր բերի քան զծանր, որպէս իւղ



յերեսս ջրոյ : Կնդ օդ ճանապարհ գործէ ձայնն , և որ-  
չափ մարուր է և խաղաղ , այնչափ առաւել յտակ լի  
ձայնն : Վարձեալ ցնդի ձայնն 'ի թանձր և 'ի խոնաւա-  
կան մասանց յօդս ճախրելոց : Լըյագանս ասի բացա-  
գանչութիւն օդոյ . իբր զի ուր ընդդիմահար մարմնոյ պա-  
տահէ , անդրէն ընդ կրունկն դառնոյ , յորմէ նոյն ձայն  
ազդէ յականջս խօսողին : Հօդս գոյանան անդ , անյրն ,  
յիւն , փայլափն , կայծափն , ծիւծուն , և այլ մարկորայն :

ԺԿ :

Հող :

( ) զն հազիւ երբէք հանգարտի , այլ գրեթէ միշտ  
'ի շարժման կայ : Շարժումն օդոյ սաստիկ հնչելոյ հող  
ասի , իսկ հեզիկ հնչեալ սիւգ վերաձայնի : Չորք են  
գլխաւոր հողմունք , որք շնչեն 'ի չորից կողմանց աշխար-  
հի : Լողորբիտս , որ և ուրբիտս շնչէ 'ի հիւսիսոյ , ասիւ-  
լիոգ կամ երոս յարևելից . նոսրս 'ի հարաւոյ . զլիւ-  
սարևմտից : Հիւսիսային շնչմունք ցրտագին են քան զայլ  
ամենայն հողմունս . հարաւ ըստ առաւել մասին գաղջ  
է . արևմուտք խոնաւ . և արևելք չոր : Հողմունք բազ-  
մապատիկ օգտակարութիւնս ունին . մաքրեն զօդն 'ի  
փնասակար գոլորշեաց . բարեխառնեն զտապ խորշակին ,  
և զբազում ախտից պատճառս կարճեն : Արեն զամպս .  
և սյսր անդր տարաբերեն . և յետ ձմերայնոյն անցանե-  
լոյ լուծանեն զձիւնս , և զերկիր բազում անձրևօք ոռո-  
գեալ՝ վաղ քան զարեգակն գիտնն ցամաքեցուցանել .  
նաւս վարեն , և աղօրիս շարժեն : Բայց երբեմն փնաս  
գործեն : Սրբիկ երբեմն զճառս յարմատոց խլէ . զէնս  
կործանէ , և զնաւս 'ի նաւարեկութեան վտանգ արկեալ  
բազում անգամ և խորտակէ : Բանութիւն հողմոյ անդրն-  
դայնոյ է պատճառ երկրի սասանման , որ բազում ան-  
գամ 'ի բազում տեղիս զբազալքս և զգիւղս հիմն 'ի վեր  
տապալեաց :



ԺԿ:

ՀՊ:

Հուրն է պատճառ լուսոյ և ջերմութեան . լուսաւորէ, ջերմացանէ, խանձէ, և այրէ: Արբեմն բորբոքի հուր արագ արագ շփմամբ դիւրաւառ նիւթոց: Այրեն և ճառագայթք արեգական եթէ կոր ապակուլ 'ի մի ժողովիցին: Հասարակօրէն հուր վառեն զվէմ գայլախաղ ընդ պողովպատի հարեալ: Փայտն վառեալ ծխէ, իսկ մնացեալն յածիւն դառնայ: Բազում պինդ մարմինս գիտէ հուր հեղուկ գործել, որպէս զոսկին, զարծաթն և զսլլ մետաղս: Հուրն՝ ճարակի կարօտանայ և օդոյ փշելոյ, ապա թէ ոչ՝ շիջանի: Դ տարերս թեթեւագոյն է քան զամենեսին:

ԺԼ:

ԼԳ:

Դ հրոյ գոյանայ լոյս, զոր հուրն ընդ ամենայն կողմն ծաւալէ: Օջրութիւն հրոյ յերկուս առաւելապէս փայլէ: Ասա՛ զի միայն լուսով կարեմք տեսանել և երկրորդ՝ զգոյնս որոշել 'ի միմեանց: Վանդի ուր չիք լոյս, խաւարն 'ի վերայ հասեալ՝ գոյնք անհետանան: Լոյսն քան զամենայն ինչ, ևս և քան զձայն արագ ընթանայ: Ճառագայթք արեգական միշտ ուղղաձիգ բերին և ոչ երբէք խտորին, բայց եթէ յորժամ յանգայտ մարմնոյ 'ի թանձր հասանեն, որպէս յորժամ յօդոյ 'ի ջուր գան մտանեն: Օ՛ի 'ի լինել այսմ այսպէս բեկբեկին ճառագայթք արեգական, և գաւազան 'ի ջուր մխեալ՝ խորտակեալ երևի:

ԺԵ:

ԳԻՆՆԵՆԷ:

Չ երմութիւն արեգական ժողովէ 'ի ծովէ 'ի գետոց և յաղբերաց անբաւ գոլորշիս, որք 'ի վերելս ցնդեալ պակասին: Այս գոլորշիք 'ի ցրտութենէ վերին օդոյ 'ի

մի ժողովին և խտանան, որով և երևելի լինի աչաց մե-  
րոց, և եթէ տարածեսցի 'ի վերայ երկրի հասարակ  
ձայնիւ Բեֆ կոչի, եթէ վերանայ յօգն ամա անուանի:

### ԺԼ:

Ընդ, անչբե, յիւն, Կարկոս, և այլն:

Եթէ մէզն տարածեսցի 'ի վերայ երկրի՝ նշան է  
օդոյ պարզելոյ, այլ եթէ 'ի վեր յօգս ելցէ նշան է անձ-  
րևոյ: Հաշնանային և 'ի գարնանային եղանակս ընդ  
առաւօտս և ընդ երեկս մէզք յաճախեն, մանաւանդ 'ի  
ջրարբի տեղիս: Եթէ գոլորչիք յօգս սառին 'ի ցրտոյ,  
յիւն ծնանի: Եթէ սառուցեալ անձրև 'ի ցրտութենէ  
վերին օդոյն՝ խկոյն անկցի 'ի ստորին օդ ջերմ Կարկոս  
լինի: Ասն այնորիկ յամարայնի կարկտէ, և 'ի ձմերայ-  
նի ձիւնէ: Հօղն պատճառի 'ի շոգեաց երկրի և անկոց,  
որք ընդ առաւօտս և ընդ երեկս խտացեալ 'ի կայլակս  
կայլակս ժողովին: Եթէ ցօղն զցուրտ մարմնովքն սառի,  
Էղէանն անուանի:

### ԺԼ:

Փայլակն, Կայծակոսն, և այլն:

Ըաց 'ի ջրային գոլորչեաց ելանեն նաև ծծմբային  
գոլորչիք խառնեալք 'ի ծծմբոյ և յարջասպէ, ուստի և  
փայլատակունք ծնանին: Փայլակն երևի 'ի խիտ և 'ի  
լրթագոյն ամպոց, և բազում անգամ ճայթիւնս գործէ  
ահագին որոտմամբ, թէպէտ յամբ հասանէ ձայնն յա-  
կանջս մեր, կամ բնաւ ամենեին ոչ լի: Օ ի որչափ  
հեռի է 'ի մէնջ փայլակն՝ այնչափ անագան հասանէ և  
հնչիւն որոտման: Կայծակն բազում օգտակարութիւնս  
մատակարարէ յաշխարհս, զի մաքրէ և զովացուցանէ  
զօղն, և զվնասակարս գոլորչեաց ծախէ: Ըազում ան-  
գամ վնասէ ևս, զի հրձիգ առնէ, հերձանէ և մանրէ  
զծառս, և զմարդիկ և զանասունս արագագոյն քան զքրթ-  
թել մի ական հեղձամղձուկ մահուամբ կարճէ 'ի կենաց:  
Համարայնի յաճախ փայլատակէ և որոտայ:

ԵԻ :

ԵՆԼ Տեղեորայ :

Են և այլք 'ի հրոյ ձևացեալ տեսիլք և մէտէորայք որք ոչինչ ճայթիւնս գործեն . որպէս վիշապք թռուցեալք և աստեղք սահեալք , որք ճնանին 'ի պարարտ գոլորշաց երկրի : Սնէ հոս 'ի ճախին վայրս երևի : Օլեռն կամ աղէղն ձգի յամպս յաւուրս անձրեաց , յորժամ արեգակն 'ի հանդիպոյ ծագէ : Ասն այնորիկ յառաւօտու ծիածանն նկարի յարեմուտս , և յերեկոյի յարեելս :

Ի :

Իէրէն :

Յերեսս երկրի են լերինք բարձունք , բլուրք ամբարձեալք , և խորին ձորք : Բլուր ասի փոքրիկ և խոնարհ լեռան : Արչափ բարձր են լերինք , նոյնչափ առաւել խորին ձորս ունին : Իհասն այսպսպ բարձր է քան զամենայն լերինս 'ի վերին կիսագունտն , իսկ 'ի ներքինն՝ այնինքն յամբրիկայ՝ Բերունն լէրէն : Գագաթն լերանց բարձանց նաև 'ի ջերմ գաւառս պատի միշտ սաստկութեամբ սառնամանեաց , որպէս ալբեսյ լերինք : Են և լերինք ինչ , որոց կատարն հրոյ տոչորի՝ որպէս Էփնոս 'ի սիկիլիա , և Վեսուս 'ի նեպոլիս : Իլերինք բազում օգուտ մատակարարեն յաշխարհս . անտի քամեալ ժողովին առուք , աղբերք , և գետք և անտի պեղեն զամենայն ազգս հանգաց : Ունին խոտս առողջարարս : Սանձեն զանկարգ հողմոց շնչել , և բարեխառնեն զխորշակին սաստկութիւն :

ԻԸ :

Սեփոս :

Օմետաղս 'ի լերանց հատանեն , յորոց ոմանք պոստոլան տալն , և ոմանք անորժ : Պատուական է ոսկին , արծաթն , անարգ է երկաթն , պղինձն , անագն , կապարն

և սնտիկն : Ոսկին որ քան զամենայն մետաղս ծանր է և պատուական , ոչ միայն 'ի լերինս , այլ և 'ի գետս գտանի : Ոսկեգործք ոսկի և արծաթի դրամ հատանեն , և ազգի ազգի զարդս քանդակեն : Արկաթն յորմէ բազում ինչ 'ի բարւոք պէտս կազմեն , գտանի 'ի բազում կողմանս : Պողովպատն է երկաթ հրացեալ , և 'ի ջուր թացեալ : Ի պղնձոյ և յանագէ զանազան անօթս հանդերձեն . մանաւանդ պղնձի անօթ անագեալ՝ ժանգիւ ոչ ապականի : Օկապարն , որ կակուղ է քան զայլ ամենայն մետաղս , դիւրին է հրով հալել :

ԻԿ :

Վարինք :

Վարինք յազգս ազգս բաժանին : Ոմանք հասարակ են , ոմանք սակաւագիւտ , և ոմանք պատուական : Հասարակ են վէմք , գայլախաղ քար , և այլն : Սակաւագիւտ է մագնիս , ապակի , մարմոռ : Պատուական՝ ակունքն : Ընուած որմոց , տանց և քաղաքաց հասարակ քարանց պիտոյանայ 'ի կատարումն : Յետանաւ սրեն զթացեալ դանակ , ածելի , և այլն : Վայլախաղ վէմ ընդ պողովպատի հարեալ կայծակունս թօթափէ : Սագնիս քարն զարմանալին քան զամենեսեան զերկաթ յինքն քարչէ , և սերտ ընդ նմա կապի : Օայս զօրութիւն բնաւորական հաղորդէ և երկաթոյ : Աթէ ազատ թողցի , միշտ ընդ հիւսիս բերի , և նաւալարաց յանհետ ծովու զուշաւոր շաւիղ ցուցանէ :

ԻԳ :

Վպակին քար է թափանցիկ և սերտ : Սարմոռն կամ սպիտակ է , և կամ երփն երփն գունաւորութեամբ պիսակացեալ : Սաթ 'ի ծովու գոյանայ : Վկունք գտեալք 'ի հող ամենեւին ոչ փողփողեն , այլ ձենն արուեստագէտ ճարտարաց սրեալ , ընդ ոսկի յեռեալ պայծառ երևեցուցանէ : Այս թափանցիկ են և կամ ընդդիմահար , որպէս զմրուխտ կանաչ . յակինդ կարմիր . տպա-



զինն գեղին, և այլն : Այլ պատուականագոյն և անվանելի է քան զամենայն՝ անդամանդ, որ պայծառ ճառագայթիք և երփն երփն հարկանելով զաչս տեսողացն զօշոտէ : Ասկայն երկանաբար օգտակարութեամբ յոյժ գերազանցէ զամենեքումք :

Ի՛) :

Տո՛ւնի :

Ամենայն տունկք երիս մասունս ունին արմարս, բունս և ոսարս : Ոստքն 'ի բունոյ շառաւիղեն, որ 'ի փոքրիկ և 'ի փափուկ բանջարս ծղօք կամ ծիլ կոչի : Ոստքն բերեն պտուկս, սաղարթս, տերեւս, ծաղիկս, պտուղս, և սերմանս : Արտաքուստ կեղևով պատին, իսկ 'իներքս 'ի բունն է ուղեղ տնկոց : Արմատք տնկոց ընդ հողով ծածկին, ուստի զխոնաւութիւնն 'ի վեր ծծեն, որ սնուցանէ զբոյսն : Այլ տունկք ոչ միայն յարմատոյ սնանին ըզհիւթն 'ի վեր բերելով, այլ նաև ընդ ծակտիս տերեւոց ձգեն զօգն, վասն այնորիկ առանց տերեւոյ ոչինչ պտուղ հասունանալ կարէ : Օտաք բազմանան կամ 'ի սերմանէ կամ 'ի շառաւիղէ և կամ յարմատոյ : Ոչ ամենայն տունկ յամենայն տեղիս աճէ :

Ի՛) :

Օտաք :

Օտաք կամ պողաբեր են և կամ անպտուղ : Պողաբերք են խնձորենի, տանձենի, կերասենի, սալորենի, նուենի, ընկուղի, դեղձի, ծիրանի, և այլն : Անպտուղք են եղևին, գի, սաւծի, կաղամախ, հացի, ուռի : Այլրենիք ինքնին բուսանին, իսկ պողաբերք մարդկային խնամոց պէտս ունին : Հաշնանային եղանակս տերեւք ծառոց ինչ թօթափին, որպէս խնձորենւոյ, և այլն, և այլոց անթառամ մնայ, որպէս դաբնւոյն և եղևնափայտին և այլոց բազմաց : Փայտ ծառոց կամ 'ի շինուածս պատշաճի, և կամ յայրումն պատրաստի :



Ի.Օ.:

Երկր:

Ի բերս երկրի օգտակարագոյն մարդկան համարին արմտիք, յորոց կէսքն կանուխ, և կէսքն անագան հասունանան: Կանուխ ասի որ յաշնայնի սերմանեալ յամարայնի ՚ի գալ ամին հնձեն, որպէս ցորեան, հաճար և այլն: Անագան ասի, զոր ՚ի գարնայնի սերմանեն, որպէս վարսակ, գարի, կորեակ և ձիակորեակ (անուշակ և անուշակ): Ի կարգ սոցա դասին բակլայ, ոսպն, լուբինա, սիսեռն և այլն: Արպէս զի երկիր պտղաբեր լիցի՝ աղքատ սրկանեն: Յետոյ արօրագիր առնեն, սերմանեն և տափանեն: Իբրև հունձք ատոբանան՝ մանգաղաւ հնձեն, և ՚ի շտեմարանս ժողովեն:

Ի.Ե.:

Օտարական:

Արպէս արմտիք կարգեցան յարարէն ՚ի պէտս մարդկան դարմանոյ, նոյնպէս ծաղկանց ամենահրաշ զանազանութիւնք պատրաստեցան ՚ի զուարճութիւն աչաց և ՚ի բուրումն անուշահոտութեան ՚ի վայելս մարդկան ազգի: Օտարկանց առ մեզ յաճախելոց ՚ի բուրաստանս և յառ տնին զբօսանս՝ բազում են տեսակք, բայց գլխաւորքն ՚ի նոսա գեղեցկութեամբ են՝ շահպրակ (շահպոյ), վարդ, շուշան, կակաչ (լուկ), յակինթ ծաղիկ (պլակակ), շահոբրամ (գարեմիկ): Շահպրակ յառաջքան զամենայն ծաղկունս աւետէ զգարուն: Արդից բազում են տեսակք զանազանեալք ՚ի տերևս, ՚ի գոյնն և ՚ի հոտն: Շուշան սքանչելի բուրմամբ և պայծառ գունով վառեալ պատմէ զարարչին գեղեցկութենէ և զանպակաս խնամոց նորա: Բազումք ՚ի ծաղկանց հոտանոյշ բուրեն, և կէսք առ աչս միայն ունին զնորհն, որպէս կակաչ, որ ամենեկին հոտ ոչ բուրէ:

